

ՃԱՏՖԱՐԻ «ՍՈՒՐԻՈՅ ՄԵՋ ԽԱՂԱՊՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԵՏՔ Է ԱՐՏԱՔԻՆ ՈՒԺԵՐԸ ԴՈՒՍ ՉԱՆ ԵՐԿՐԵՆ»

Երեքշաբթի, 1 Հոկտեմբեր 2019-ին, ՄԱԿ-ի Ապահովության և Կրթության Սուրբոյ յատուկ նիստին, ՄԱԿ-ի մօտ Սուրբոյ մնայուն բանագնաց դոկտ. Պաշար ալ ճաաֆարի յայտնեց, որ Սուրբոյ տագնապին լուծումը կարելի կը դառնայ այն ատեն, երբ երկրին մէջ ապօրինաբար ներկայութիւն դարձած ամերիկեան, բրիտանական, ֆրանսական եւ թրքական ուժերը դուրս ելլեն: Ան վերահաստատեց, որ Դամասկոս պատրաստակամութիւն կը յայտնէ նեցուկ կանգնելու Սահմանադրական Յանձնախումբի աշխատանքին եւ գործակցելու յանձնախումբի աշխատանքներուն հետեւող ՄԱԿ-ի յատուկ բանագնացին հետ:



Նախապէս, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կոթերես յայտնած էր, որ Սահմանադրական Յանձնախումբը Սուրբոյ տագնապի քաղաքական լուծման ուղիին վրայ յաջող քայլ մը կը համարուի:

Ըստ Կոթերեսի, Սահմանադրական Յանձնախումբը իր անդրանիկ ժողովը պիտի գումարէ 30 Հոկտեմբեր 2019-ին:

ՍՈՒՐԻՈՅ ԸՆԴՐՔ ՄԸ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՅԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀՆԴԿԱՍՏԱՆԻ, ՊԵՆՏԱՌՈՒՄԻՈՅ, ԻՐԱՔԻ ԵՒ ՍՈՒՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարութեան 74-րդ նիստի շրջագիծէն ներս, Սուրբոյ արտաքին գործոց նախարար Ուալիտ ալ Մուալլէմ հանդիպումներ ունեցաւ Զնկաստանի, Պելառուսիոյ, Դայաստանի, Իրաքի եւ Սուտանի արտաքին գործոց նախարարներուն հետ:

Ան «Ռուսիա Այսօր» պատկերասփիւռային կայանին հետ հարցազրոյցին ընթացքին յայտնեց, որ Ռուսիոյ սուրիական բանակին աջակցութիւնը դրական ազդեցութիւն ունեցաւ գինուորական գետնի վրայ եւ ռուս-սուրի-



ական համակարգուած աշխատանքներուն շնորհիւ բազմաթիւ հողատարածքներ ազատագրուեցան: Մուալլէմ դիտել տուաւ, որ պատերազմէն վերջ ռուս-սուրիական յարաբերութիւնը պիտի խորանայ:

Անդրադառնալով Իտլիայի թղթածրարին, Մուալլէմ յայտնեց, որ Թուրքիա Սոչիի համաձայնութիւնը չի գործադրեր ու թէև Թուրքիոյ մեղսակցութեամբ «Ճապիաթ ալ Նուսրա» գինեալ ահաբեկական խմբաւորումը իր ամբողջական հսկողութեան տակ առած է Իտլիպը, այնուամենայնիւ Սուրիան պիտի ազատագրէ քաղաքը եւ վերահաստատէ շրջանի խաղաղութիւնը:

ՀԱԼԵՊԻ ՄԵՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 28-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱՌՈՐ ՅԻՇԱՏԱԿՈՄԻ

Հայաստանի Հանրապետութեան վերակախութեան 28-րդ տարեդարձին առիթով, Ուրբաթ, 27 Սեպտեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 6:00-ին, Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան պաշտօնական ընդունելութիւն մը կազմակերպեց «Նատի Հալէպ» կեդրոնէն ներս:



Սրահէն ներս հրաւիրեալները պաշտօնապէս ընդունուեցան ՀՀ Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեանին կողմէ:

Հայաստանի Հանրապետութեան 28-ամեակի հանդիսաւոր յիշատակութեան ներկայ էին Սուրբոյ գրասաշրջութեան նախարարը, Պաաս Կուսակցութեան Հալէպի առաջին քարտուղարը, Հալէպի Նահանգապետը, պետական բարձրաստիճան պատասխանատուներ, ՀՀԴ Բիւրոյի անդամ Բենիամին Պէլաքեան, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեղշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհ. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրբոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վեր. Յարութիւն Սեյիմեան, Հալէպի Զրիստոնեայ համայնքապետներ, հալէպահայ կազմակերպութիւններու, միու-

Թղթակից
 Ըար. 19 16

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցնող օրերուն, կազմակերպական համապատասխան կարգով, ՀՀԴ կազմակերպութիւնը համապարփակ քննութեան ենթարկեց վերջին երկամեակի սուրիահայութեան պարզած իրավիճակը, կատարուած աշխատանքները՝ կազմակերպական քաղաքական, ներազգային, ծառայողական, քարոզչական, տնտեսական, եւ այլ մարգերու մէջ:

Քննեց սուրիահայութեան վերականգնումի ներկայ փուլը, ապագայ պատկերացումները եւ առ այդ կատարեց եզրայանգումներ, ուղենշումներ եւ գոյացուց որոշումներ:

Հաւատարիմ մնալով սուրիական հայրենիքին եւ անոր հողային ամբողջականութեան, վերահաստատեց Սուրբոյ տագնապի քաղաքական լուծման եւ սուրիական ընկերութեան համերաշխ համակցութեան գօրակցող իր կեցուածքը:

Վերանորոգեց իր յանձնառութիւնը՝ սատար կանգնելու Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան հզօրացման ու զարգացման գործընթացին, ինչպէս նաեւ սուրիահայութեան անվտանգութեան երաշխիքներու ամրագրման:

ՀՀԴ կազմակերպութիւնը, հաւատարիմ իր առաքելութեան, վճռակամօրէն պիտի շարունակէ իր ժողովրդանուէր ծառայութիւնը՝ ի խնդիր համայն սուրիահայութեան պատմական դերակատարութեան ամրապնդման եւ անոր վերելքին:

Տեղեկատուական Գրասենյակ
 29 Սեպտեմբեր 2019

Խմբագրական

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՅՆՈՒՄ

Նախորդ օրերուն, ԵՏՄ-ը նախագահող երկրին՝ Չայաստանի մէջ տեղի ունեցաւ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵՏՄ) Բարձրագոյն Խորհուրդի ընդլայնուած կազմով կիստը, որուն կը մասնակցէին ԵՏՄ անդամ պետութիւններու ղեկավարները եւ 3 երկիրներու հրաւիրեալ առաջնորդներ:

Նիստին արդիւնքները լոյս սփռեցին Եւրասիական Տնտեսական Միութեան արտաքին տնտեսական յարաբերութիւններու աշխարհագրութեան ընդլայնումին վրայ: Միութիւնը առարկայական բանակցութիւններ կը վարէ քանի մը երկրի, ինչպէս նաեւ 20 միջազգային կառոյցներու եւ կազմակերպութիւններու հետ: Շուտով ազատ առեւտուրի գոտիի շուրջ Նոյնանման բանակցութիւններ պիտի ստորագրուին տնտեսութեան ոլորտի հսկաներէն մէկուն՝ Չնդկաստանի հետ: Զոյնտեմբերին գործնական փուլ պիտի թեւակոխեն Իրանի եւ Չինաստանի հետ ազատ առեւտուրի համաձայնագիրները:

Չայաստան ԵՏՄ-ի անդամ միակ երկիրն է, որ Իրանի հետ ցամաքային սահման ունի: Այս առաւելութեան օգտագործումը պիտի նպաստէ առեւտրական եւ տնտեսական յարաբերութիւններու աշխուժացման՝ Չայաստանը դարձնելով ԵՏՄ-ի համար Իրանի հետ տնտեսական եւ առեւտրական յարաբերութիւններու ամրագրման գործուն հարթակ:

ԵՏՄ-ի անդամ երկիրներու տնտեսական համարկուած գործընթացներուն հիմնական նպատակը անդամ երկիրներու տնտեսական մրցունակութեան մակարդակի բարձրացումն է: Չայաստանի նման փոքր տնտեսութիւն ունեցող երկիրներուն համար կարեւոր նշանակութիւն ունի արտադրութիւններու արտածումին աստիճանական աճը: Չայաստանի ԵՏՄ-ին անդամակցութեան հինգ տարուան ընթացքին այս ցուցանիշը բարելաւուած կը թուի ըլլալ:

Չայաստանի տնտեսութեան զարգացման ռազմավարութիւնը առաւելաբար պէտք է հիմնուի արտահանման ներուժի խթանումին վրայ: ԵՏՄ-ի անդամ երկիրներու հետ առեւտուր ընելու համար Չայաստան ունի արտահանման չօգտագործուած հսկայ ներուժ: Տնտեսագետներու համաձայն, գիներու սերտորոշութիւնը եւ արտաքին առեւտուրի կանոններու մատչելիութիւնը պիտի նպաստեն ԶԶ-էն դէպի ԵՏՄ-ի երկիրներ արտածումի աճին: Միւս կողմէ, արտահանումի աճը ինքնաբերաբար տեղի չ'ունենար, այլ կը պահանջէ արտաքին առեւտրային յստակ ռազմավարութեան կենսագործում, ինչպէս նաեւ տուեալ երկիրներու հետ միասնական շուկայի ստեղծում:

Ուստի ընծայուած առիթը լաւագոյնս օգտագործելով, տնտեսական յառաջընթացի ապահովման համար Չայաստանի ներքաղաքական առճակատումները անհրաժեշտ է վերածել մասնագիտական որակեալ մշակումներու վրայ հիմնուած տնտեսութեան զարգացման եւ ժողովուրդին բարեկեցութեան ծառայող քաղաքական գործակցութեան:

«Գ.»

-Երկուշաբթի, 30 Սեպտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ-ի թղթակիցը հաղորդեց, որ 7 տարի ետք տեղի ունեցաւ իրաքեան-սուրիական Պուքամալ-Քաաւմ սահմանային միջանցքին պաշտօնական բացումը:

Բացման արարողութեան ներկայ գտնուեցան Սուրիոյ ներքին գործոց նախարար Մուհամմետ Խալէտ Ռահմունի եւ իրաքեան սահմանային միջանցքներու խորհուրդի նախագահի ներկայացուցիչ, Իրաքի վարչապետ Քազէմ Ուքայի:



Ռահմուն շեշտեց, որ միջանցքին բացումը իրականացաւ սուրիական եւ իրաքեան բանակներուն արձանագրած յաղթանակներուն շնորհիւ:


Յիշեցնելք, որ 19 Զոկտեմբեր 2017-ին, սուրիական բանակը ազատագրեց Պուքամալ քաղաքը եւ անոր շրջակայքը ՏԱԶԵՇ-ի զինեալ ահաբեկչական խմբաւորումներէն:

-Սուրիոյ Սահմանադրական Յանձնախումբը միջազգային ընտանիքին կողմէ ողջունելի համարուեցաւ: Այս առիթով Ղազախըստան յայտնեց, որ մայրաքաղաք Նուր Սուլթանի մէջ Ասթանայի խորհրդակցութիւններու նոր նիստ մը տեղի պիտի ունենայ այս ամսուան ընթացքին:



Միւս կողմէ, Չայաստանի մէջ Եւրասիական Տնտեսական Միութեան տնտեսական բարձրագոյն խորհուրդի նիստէն ետք, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին եւ Իրանի նախագահ Զասան Ռոհանի խորհրդակցեցան Սուրիոյ ներկայ իրավիճակին եւ զինուորական վերջին զարգացումներուն շուրջ: Կողմերը յայտնեցին, որ Ռուսիոյ եւ Իրանի նպատակն է տարածաշրջանին մէջ խաղաղութիւն հաստատել:

-Ռուս-սուրիական համակարգումի կեդրոնը ամերիկեան ուժերէն պահանջեց դուրս գալ սուրիական գրաւուած հողերէն՝ վերացնելու սահմանադրական բարեփոխումներուն եւ ահաբեկչութեան դէմ պայքարին խոչընդոտները:



Կեդրոնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ մը, յայտնելով որ ԱՄՆ չյարգեց Ռուսիոյ հետ իր համաձայնութիւնը, որուն հետեւանքով ալ 29 Սեպտեմբեր 2019-ին 2000-ի փոխարէն 363 քաղաքացի միայն յաջողեցաւ դուրս ելլել Մուխաթամ Ռուքայանէն:

-Չորեքշաբթի, 2 Զոկտեմբեր 2019-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ 20-րդ օրն ըլլալով Իտլիպի մէջ «Ճապիաթ ալ Նուրսա»ի զինեալ ահաբեկչական խմբաւորումները արգելք կը հանդիսանան քնակիչներուն Ապուտըհուր մարդասիրական միջանցքէն դուրս ելլելուն եւ զիրենք իբրեւ մարդկային վահաններ կ'օգտագործեն:



ՍԱՆԱ-ի թղթակիցը յայտնեց, որ 20 օրէ ի վեր որեւէ քնակիչ չյաջողեցաւ դուրս ելլել զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հսկողութեան տակ առնուած շրջաններէն, յայտնելով, որ պատկան մարմինները տարբեր միջոցներ որդեգրեցին եւ քաղաքացիներուն ապահով ելքի բոլոր երաշխիքները ապահովեցին:

Լուրեր Հայաշխարհին

ԵՐԵՎԱՆԻ ՄԵՋ ԳՈՒՄԱՐՈՒԵՅԱԼ ԵՏՄ-Ի ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՆԻՍՏԸ

1 Հոկտեմբերին Երևանի մեջ գումարուեցաւ Եւրասիական Տնտեսական Միութեան (այսուհետեւ՝ ԵՏՄ) տնտեսական բարձրագոյն խորհուրդին ընդլայնուած նիստը:



Նիստին իրենց մասնակցութիւնը բերին ԵՏՄ-ի անդամ երկիրներու ղեկավարները՝ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին, Պելոռուսիոյ Նախագահ Ալեքսանտր Լուքաշենքո, Խըրիզիստանի Նախագահ Սորանայայ ժէնպէքով, Ղազախստանի Նախագահ Զասիմ ժումարթ-Թոքայեւ եւ Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի աշխատակազմի Նախագահ Տիգրան Սարգսեան:

Նիստին ընթացքին քննարկուեցան ԵՏՄ-ի յառաջիկայ աշխատանքները, յաջորդ տարուան ծրագիրները, ԵՏՄ-ի 2018-ի պիտոճէի կատարողականը, ԵՏՄ-ի 2020-ի պիտոճէն, ԵՏՄ-ի միասնական ֆինանսական շուկայի կազմաւորման հայեցակարգը, ԵՏՄ-ի ներքին շարք մը փոփոխութիւններ եւ Բարձրագոյն Խորհուրդի յաջորդ նիստի վայրը:

ՀՀ վարչապետը նիստէն ետք առանձին հանդիպումներ ունեցաւ Ռուսիոյ, Իրանի եւ Պելոռուսիոյ Նախագահներուն, ինչպէս նաեւ Սինկափուրի վարչապետին, որոնց հետ արծարծեց տարածաշրջանային եւ տնտեսական, քաղաքական եւ մարդասիրական բազմակողմանի գործակցութեան առնչուող հարցեր:

ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼԵԱՆ. «ՄԵՆՔ ՊԻՏԻ ԸԼԼԱՆՔ ՄԻԱՍՆԱԿԱՄ, ԶԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ, ԿԱՅ ՄԵՎ ԺՈՂՈՎՈՐԴ, ՄԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ, ՄԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ՝ ԱՉԱՏ, ԱՆԿԱՆ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»

«Ազգակ».- Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ տարբեր մթնոլորտ կը տիրէր Կիրակի, 29 Սեպտեմբերին, յետմիջօրէի ժամը 5:00-էն մինչեւ կէս գիշեր, որովհետեւ անկկա համախմբման վայր դարձաւ լիբանանահայութեան համար՝ առանց տարիքի ու սեռի խտրութեան: Արդարեւ, «Մի՛շտ միասին» խորագիրը կրող ժողովրդային փառատօնին, որ

թիւնը քանդակած են հայ կեանքի երկնակամարին վրայ: Այսօր մենք բոլորս՝ ամբողջ լիբանանահայութիւնը, երեկոյեան ժամը 5:00-էն ժամադրուած Ե Պուրճ Համուտի քաղաքապետարանի դաշտին մէջ մասնակցելու տօնախմբութեան: Մենք այսօր կ'եզրափակենք տօնախմբութիւնը՝ նշելով Հայաստանի Հանրապետութեան վերականգնման տարեդարձը»:



կազմակերպուած էր ՀՀ Դաշնակցութեան Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հանրային կապերու մարմինին կողմէ, մասնակցեցան մեծաթիւ հայորդիներ: ՀՀ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի Հանրային Կապերու Մարմինին անունով խօսք առաւ Յակոբ Հաւաթեան: Ան խօսքը ուղղելով բազմահազար ժողովուրդին ըսաւ. «Դուք ձեր գործնական մասնակցութեամբ եւ ինքնակամ համոզումով տուած էք փաստը «Մի՛շտ միասին» ըլլալու ըմբռնողութեան, եւ իրարայայջորդ սերունդներ այս բացարձակ իրականութիւնը ու խոր ճշմարտու-

Ապա խօսք առաւ ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեան, որ նախ իր ուրախութիւնը եւ յուզումը յայտնեց Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնը Լիբանանի մայրաքաղաք Պեյրութի մէջ նշելուն համար, ապա խօսքը ուղղելով ժողովուրդին ըսաւ. «Դուք այսօր ձեր հայրենիքին մէջ չէք ապրիր, ցեղասպան թուրքը ձեզ գրկած է ձեր հայրենիքէն, բայց չէ կրցած ձեր մէջ սպանել հայրենիքը, հայրենիքը ձեր մէջ է, ձեր ծիներուն մէջ է, ձեր արեան եւ եռութեան մէջ է»: Ան շեշտեց, որ այսօր նոր աշ-

ՀՅԴ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ

Անցեալ Կիրակի, վարչապետ Նիկոլ Փաշինեանի այցելութիւնը Լոս Անճելըս առիթ մը եղաւ լուսարձակի տակ առնելու Հայոց ցեղասպանութեան ողբերգութենէն վերապրած Ամերիկայի հայ համայնքի վճռակալութիւնը՝ դառնալու անքակտելի մասնիկ Ամերիկայի հասարակական կեանքի գարգացման գործին՝ Լոս Անճելըս քաղաքին, Զալիֆորնիա նահանգին եւ Միացեալ Նահանգներու մէջ:



տակ չէ, այլ հաւատամք՝ հետապնդելու հայ ժողովուրդի արդար իրաւունքներու դատը՝ իբրեւ ծառայութիւն Հայաստանի պետականութեան հզօրացման եւ իրապէս ազատ, անկախ, զարգացած եւ միացեալ հայ-

ՀՀ Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն կը հաւատայ, որ սփիւռքի հայութեան դերը նիւթական օժանդակութիւններէն եւ նպաստներէն աւելին պէտք է ըլլայ, որովհետեւ սփիւռքը նաեւ Հայ դատը հետապնդող աշխուժ քաղաքական ուժ է: Վարչապետին հետ մեր հանդիպումներուն ընթացքին մատնանշեցինք նաեւ բաժանումներ ստեղծելու վտանգները՝ շեշտելով, որ Դաշնակցութեան մէջ շերտեր չկան եւ թէ ազգային բոլոր հարցերուն վերաբերեալ կուսակցութիւնը գաղափարապէս մէկ կեց ու ծքով հանդէս կուգայ: Այսիկով ալ կը հաւատանք, որ մեր արդար դատի հետապնդման եւ Հայաստանի ազգային անվտանգութեան իխնդիր պէտք է գործի լծել մեր ժողովուրդի ամբողջ կարողականութիւնը: Այս շրջածիրին մէջ, հարկ համարեցինք բացատրել, որ սփիւռքի համար ինքնութեան պահպանումը ինքնանպա-

րենիքի մը ստեղծման: Վարչապետին այցելած Լոս Անճելըս քաղաքի հայկական համայնքը հիմնովին կառուցուած է հայկական շարդերէն ու Յեղասպանութենէն ճողոպրած հայորդիներու ջանքերով: Այս համայնքին մէջ ՀՀ Դաշնակցութիւնը ունեցած է հիմնական դերակատարութիւն համայնքի կրթական, մշակութային եւ քաղաքական հիմնարկներու ստեղծման ու կառուցման գործին մէջ: Հիմնարկներ, որոնք ո՛չ միայն ծառայած են հայկական ինքնութեան պահպանման նպատակին, այլ նաեւ սերունդներու մօտ սնուցած եւ ջատագոված են իրամայականը՝ ձգտելու ազատ, միացեալ եւ անկախ Հայաստանի մը կերտումին՝ իբրեւ հիմնաքարը մեր ժողովուրդի յարատեւման:

ՀՀ Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն վարչապետին փոխանցեց իր անվարան ու ամբողջական աջակցութիւնը՝ յառաջացնելու աշխատանքային ծրագիր մը, որուն իւրաքանչիւր առաջադրանքը առաւել պիտի ամրացնէ Հայաստանի Հանրապետութիւնը, ապահովէ անոր բարգաւաճումը, զօրացնէ անոր ազգային անվտանգութիւնը. առաջադրանքներ, որոնք ՀՀ Դաշնակցութեան գաղափարական հիմնասփիւնները եղած են անոր պատմութեան 130 տարիներուն ընթացքին: Այս առումով յոյս յայտնեցինք, որ վարչապետին վստահեցումները ընկերային արդարութեան հաստատման, դատական համակարգի բարեփոխման եւ փոխախտի դէմ պայքարի քայլերը արդիւնաւետ կ'ըլլան՝ միշտ ներհաշտ ըլլալով Հայաստանի սահմանադրութեան: Այս ծիրին մէջ, ՀՀ Դաշնակցութեան գորակցութիւնն ու աջակցութիւնը յայտնեցինք այս աշխատանքներու յաջողութեան, ինչպէս նաեւ մեր անվերապահ յանձնառութիւնը՝ կրցախի Հանրապետութեան միջազգային ճանաչման եւ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի ապահովման համար:

Վստահ ենք, որ վարչապետին Լոս Անճելըս այցելութենէն ետք, մեր համայնքը զօրավիգ պիտի կանգնի մեր համազգային ծրագիրներուն եւ առնէ դրական քայլեր, որոնք պիտի վերածուին գործնական արդիւնքներու՝ ի խնդիր Հայ դատին եւ մեր ժողովուրդին համար նոր յաջողութիւններու նուաճման:

ՀՀ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Անկախության հանրաքուէի 28 ամեակը յատկանշուեցաւ վարչապետ Նիկոլ Փաշինեանի Լոս Անճելըս կատարած այցելութեամբ: Իր տեսակին, կամ անելի ճիշդը՝ ձեւին մէջ այցելութիւնը նախընթաց չունի. առաջին անգամ ըլլալով էր, որ անկախ Զայաստանի պետական գըլխաւոր դէմքը երկրի ազգային տօնը կը նշէ սփիւռքեան համայնքի մը հետ հանդիպումով՝ պետական մակարդակով անոր յիշատակումէն անմիջապէս յետոյ:

Վարչապետի այցելութեան նախօրեակին բնականաբար բազմացան մամուլ օրգաններու մէջ թէ սոցիալական ցանցերու վրայ լուրջ եւ, շատ անելի, անլուրջ քննարկումները: Այցելութենէն անմիջապէս յետոյ, առաւելի սպասելիօրէն, քըննարկումները շարունակուեցան ընդհանրապէս շատ անելի յուզական քան բանական մօտեցումով, անելի կոնկրետ՝ Վարչապետին հանդէպ համակրանք-հակակրանք կըտրուածքով: Զարգադրումներ եղան այդ հանդիպման միտք ի բանին բացայայտելու համար, «շօն» էր, թէ՞ քաղաքական պատգամ, եւ տակաւին՝ Թաւշեայ Յեղափոխութիւնը որպէս թէ Սփիւռք փոխադրելու գուշացումներ հնչեցին: Զայաստանի անկախացումէն յետոյ իրարայջորդ իշխանութիւններու առաջին դէմքերու ամէն այցելութիւնները սփիւռքեան որեւէ համայնք բնականաբար նաեւ քաղաքական բնոյթ ունեցած են՝ այն իմաստով, որ օրուան իշխանութիւնները միշտ ալ փորձած են եթէ ոչ երաշխաւորել Սփիւռքի գօրակցութիւնը իրենց քաղաքական ուղեգիծին, առնուազն հետամուտ եղած են քննադատութիւնները նուազեցնելու եւ համակիրներ, նախընտրաբար՝ ազդեցիկ անձնաւորութիւններ եւ ոչ այնքան համայնքային կազմակերպութիւններ, շահելու:

Անկախ թէ ով ըլլալ իշխանութեան վրայ, հայրենի իշխանութիւններու այս մօտեցումը իր բովանդակութեան մէջ արմատական փոփոխութեան պիտի չ'ենթարկուի, թէեւ, անշուշտ, Սփիւռքի հետ յարաբերելու ձեւը իր հիմնական կարեւորութիւնը միշտ ալ պիտի ունենայ: Այսինքն՝ Զայաստանի պետական որեւէ այցելութիւն սփիւռքեան որեւէ համայնք «քաղաքական» պիտի ըլլայ այս իմաստով: Գոնէ այնքան ատեն որ Սփիւռքը մասնակից չ'է Սփիւռք-Զայաստան օրակարգի մը կազմութեան գործընթացին, որպէս նուազագոյն պայման այդ օրակարգի համահայկականութեան ապահովման: Իտեալը, անշուշտ, Ազգային Ժողովէն ներս սփիւռքեան ինչ որ ձեւաչափով ներկայացուցչութիւն մըն է:

Իսուսափելու համար Վարչապետին Լոս Անճելըս այցելութեան «քաղաքականացում»էն, թերեւս հետաքրքրական կ'ըլլայ այդ մասին քննարկումը դուրս բերել իր քաղաքական բովէն, շրջանցել գայն Փաշինեանի հանդէպ համակրանք-հակակրանքի կտրուածքով կատարելու փորձութեան թակարդը եւ մինչեւ իսկ պահ մը մէկ կողմ ձգել իր տուած պատգամին տառին թէ ենթադրել յետին մտադրութեան

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌՔ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԷՆ 20 ՏԱՐԻ ԱՆՑ

Խ. Տէր Ղուկասեան

անդրադարձը: Եթէ վարչապետին Սփիւռք կատարած այս առաջին գըլխաւոր այցելութիւնը տեղադրենք Զայաստանի անկախացումէն ի վեր Զայաստան-Սփիւռք յարաբերութիւններու գրեթէ երեսնամեայ պատմական հոլովոյթին մէջ, ապա եւ պիտի անդրադառնանք որ այն կու գայ օրին Ռուսերէն Զարգեանի գլխաւորած իշխանութիւններու կազմակերպած Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովէն ճիշդ 20 տարի յետոյ:

Զսան տարի առաջ էր, որ օրուան քաղաքական դէմքերը՝ նախագահ Զոհարեանը անձամբ, բայց նաեւ՝ վարչապետ Վազգէն Սարգսեանը, արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանը, նշելու համար մէկ քանին միայն, որոշում առած էին վերջ տալ Լեւոն Տէր Պետրոսեանի օրով, յատկապէս 1992-էն յետոյ, սփիւռքահայութիւնը «օտարերկրացի» համարելու քաղաքական ուղեգիծին, նախքան որ այն կառուցային բնոյթ ունենար եւ վերածուէր ձեւաչափի: Զարգը միայն Զայաստանի առաջին Նախագահին Սփիւռքի հանդէպ անյարգալից ու մեծամտական կեցուածքը չ'էր իր «նարինջ ուտողներ»ու տխրահռչակ ելոյթով, այլ՝ ազգային հաւաքական ինքնութեան իր շատ նեղ եւ ենթադրաբար «լիբերալ» հասկացողութիւնը, որուն համաձայն հայ էր միայն Զայաստանի քաղաքացին: Իշխանութիւնը իր ձեռքբերուն մէջ կեդրոնացնելու մտահոգութեամբ կլանուած Տէր Պետրոսեանի այդ կոյր մօտեցումը, մերժում էր ամէնէն առաջ համահայկականութեան եւ համահայկական օրակարգի մը գոյութեան: Իսկ Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովը եկաւ համահայկականութեան գաղափարը, որու իրականութեան փաստը տուած էր կրցախով սկսած ազգային ազատագրական պայքարի նորագոյն հանգրուանը, վերակենդանացնելու:

Միաժամանակ, ան ուղի հարթեց նախ քաղաքական կենսական փոփոխութիւններու, որոնց շարքին՝ քաղաքացիութեան օրէնքը, ապա նաեւ Զայաստան-Սփիւռք յարաբերութիւններու ձեւաչափի մը կայացման, ընդ որում սփիւռքեան գոյակիճակը եւ անոր ռազմավարական կարեւորութիւնը պետական մակարդակով հաստատագրուած մնացին:

Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովը եւս եղաւ մեծ «շօն» մը այդ յղացքի տառացի հասկացողութեամբ: Այնպէս ինչպէս միեւնոյն հասկացողութեամբ «շօն» եղան յաջորդ խորհրդաժողովները: Բայց ո՞վ կրնայ ժխտել յատկապէս առաջին խորհրդաժողովին ստեղծած մեծ խանդավառութիւնը եւ մանաւանդ անդրադարձը ներագային գործընթացի կարեւոր ու անկիւնադարձային գարգացումներուն վրայ: Այդ գարգացումներուն թերեւս ամէնէն դիպուկը, կամ մի գուցէ եւ ամէնէն ճակատագրականը

եթէ պահ մը միայն մտածենք սուրիահայութեան կացութեան մասին, քաղաքացիութեան օրէնքի փոփոխութիւնն էր: Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովը չ'էր անշուշտ որ օրէնքի փոփոխութիւնը բերաւ: Բայց այդ խորհրդաժողովին էր որ նախագահ Զոհարեան յայտարարեց թէ նպատակ ունի հարցը օրակարգի վերածելու: Այդ յայտարարութիւնը կատարելու համար ալ խորհրդաժողովի կազմակերպողները դիմած էին Սփիւռքի ամենաքաջածանօթ ակադեմականին՝ յանձնու հաշիկ Թեւոլդեանի, որ աշխա-

պետ Փաշինեանի Լոս Անճելըս այցին մասին հարցումը պետք չ'է բանաձեւով ոչ իր հետ համայնքի հաւաքին «շօն» ըլլալու կամ չ'ըլլալու իմաստով, ոչ իր անձին հանդէպ համակրանքի թէ հակակրանքի կըտրուածքով, ոչ ալ թելուգ Թաւշեայ Յեղափոխութեան «սփիւռքացման» հեքիաթով մը, անկախ թէ այն մեզ կը խանդավառէ թէ կը մտահոգէ: Վարչապետին այս այցն ու անոր յաջորդելիք միւս այցերը, որոնք թէկուզ եւ չ'ունենան վերանկախացման տօնին խորհրդանշականութիւնը, եթէ երբեւէ ազդանշան պիտի տան Զայաստան-Սփիւռք յարաբերութիւններու նոր ձեւաչափի մը, արդէ՞օք այն պիտի գայ անցնող քսանամեակի կտրած ուղիին իրագործումներուն նոր որակ բերելու, նոր հորիզոններ բանալու, թէ՞ ան-



տանքային խումբ մը կազմէր ու կարծիք ներկայացներ: Աւելին, քանի որ ներկայացուած կարծիքը ուներ նաեւ իր հիմնատրուած վերապահումները քաղաքացիութեան օրէնքի մտքի ստեղծելիք սխալ սպասումներու իմաստով, նախագահ Զոհարեան չ'վարանեցաւ անձնապէս հանդիպելու աշխատանքային խումբի անդամներուն հետ՝ կարծիքներու փոխանակման ու փոխ-հասկացողութեան համար:

Քաղաքացիութեան օրէնքի փոփոխութիւնն ու անոր առնչութիւնը Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովին բերուած է օրինակի կարգով միայն: Կարելի է բերել շատ ուրիշ օրինակներ ցոյց տալու համար որ թեթեամտութիւն է Զայաստան-Սփիւռք ամէն հանդիպում, ընդ որում նաեւ Լոս Անճելըսի այս վերջին հաւաքը, արհամարհել որպէս «շօն», առանց նման նախաձեռնութիւններու իրողական թէ կարողական անդրադարձին մասին մտածելու օրուան անմիջականութեան ուղորտէն անդին՝ համահայկականութեան հեռանկարով: Թերեւս այդ մէկը միայն մտաւորական ճիգ մըն է, շատերուն համար՝ ժամավաճառութիւն կամ «հերիֆութիւն», բայց այլ ձեւ չ'կայ հաւաքական գիտակցութիւն կերտելու եւ կոնկրետ ձեռքբերումներու համար:

Զսան տարի անցած է Զայաստան-Սփիւռք առաջին այդ հանդիպումէն եւ ահաւասիկ տեղի կ'ունենայ նմանատիպ հանդիպում մը, ճիշդ է համայնքային մակարդակով որով եւ հաւանաբար այնքան ալ ճշգրիտ չ'է Զայաստան-Սփիւռք հանդիպում կոչել այն, բայց այնուամենայնիւ յատկանշական է իր բացած կամ բանալիք հեռանկարին իմաստով: Այդ իսկ պատճառով վարչա-

ցած ուղին անտեսելու եւ ամէն ինչ գերոյնէ սկսելու մեծամտութեան սխալը պիտի գործէ: Ահա այս է հարցումը որ պետք է ընել:

Այս գրութիւնը, հետեւաբար, պարզ հրաւեր մըն է Զայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն մասին մտածելու անցնող առնուազն քսանամեակի ուղիին գիտակցելով, ամբողջ նիւթ մը՝ առանձին յօդուածի, եթէ ոչ ուսումնասիրութեան կամ մի գուցէ խորհրդաժողովի համար: Փափաքելի պիտի ըլլար որ այն պետական նախաձեռնութիւն ըլլար՝ Սփիւռքի գործուն մասնակցութեամբ: Բայց եթէ ինչ որ հայրենի *Ռեզոն տելեթ* մը կայ որ նման նախաձեռնութիւն շահագրգիռ չ'ընկատէ, ան կրնայ եւ համասփիւռքեան ծրագիր մը ըլլալ եւ անոր հրաւիրութիւնը պետական ներկայացուցիչը՝ Սփիւռքի հարցերու գործակատարի, Զանրապետութեան նախագահի թէ Վարչապետի մակարդակով:

Այդ իսկ պատճառով թերեւս հետաքրքիր պիտի ըլլայ այս գրութիւնը եզրափակել Զայաստան-Սփիւռք առաջին խորհրդաժողովին, այդ անմոռանալի «շօն» ինչ հնչած Վահէ Օշականի խօսքերը. «*մէկ ազգ՝ այո՛ր, մէկ հայրենիք՝ այո՛ր, մէկ մշակոյթ՝ չ'են գիտեր*»: Վահէին այս խօսքերը միասնականութեան թէ համահայկականութեան ժխտումը չ'էին, այլ՝ գիտակցութեան հրաւեր Սփիւռքեան գոյակիճակին եւ կրեւմտահայ մշակոյթի առանձնա-յատկութեան: Եւ այս, այնքան ծափահարուած խօսքերուն մէջբերումը, թող յիշեցում մը ըլլայ Սփիւռքին ֆրանսական հանրածանօթ ասացուածքի մը հետեւումով՝ «*դուն քեզի օգնէ՛ (կազմակերպուիր) եւ (թերեւս) հայրենի պետութիւնը քեզ կ'օգնէ*»:

Հայաստանի Հանրապետության 100 ՏՆՏԵԿԱՆ




Մկրտիչ Մկրտիչեան

Երեւանի Պետական Համալսարանը յիշատակեց իր հիմնադրութեան հարիւրամեակը:

Ատենին, Թուրքիոյ վերանորոգումը հետապնդող թրքական ազգայնական շարժումին՝ Հայաստանի դէմ շղթայագծերով պատերազմին պարտուած հայկական ուժերը, յաջողութեամբ դիմադրեցին արեւելեան Հայաստանն ալ գրաւելու անոնց փորձերուն: Այդ յաղթանակներով անոնք, դարեր տեսած ստրկութենէն ետք, կերտեցին նորագոյն ժամանակներու հայկական պետական կառոյցը՝ Հայաստանի Հանրապետութիւնը: Տարի մը ետք արդէն, կառավարութեան որոշումով, հիմը կը դրուէր ԵՊՀ-ի առաջին տարբերակին՝ Հայաստանի Համալսարանին: Զատասյիս այդ օրերուն ինչպէ՞ս կարելի էր մտածել, որ Հայաստանը կրնար օր մը ունենալ մէկէ աւելի համալսարաններ:

Համալսարանի իրողական հիմնադիրը հանրապետութեան կրթութեան եւ արուեստի նախարար Նիկոլ Աղբալեանն էր. ան արդէն համազգային ճառագայթում ունեցող հանրածանօթ մտաւորական էր: Աչքի գարնող գրաքննադատ, Սայաթ Նովայի մասնագետ, հայոց ազատագրական պայքարին մէջ նետուած ազգային գործիչ, երիտասարդ տաղանդներ՝ բանաստեղծներ ու ընդհանրապէս գրագետներ յայտնաբերող, իր գաղափարական հակառակորդ երիտասարդ բանաստեղծ Եղիշէ Զարենցը իր ղեկավարած նախարարութեան մէջ հովանաւորութեան տակ առած Նիկոլ Աղբալեանը, Հայաստանի խորհրդայնացումէն ետք պարտաւորուեցաւ արքայական դառնալ ազատելու համար նոր իշխանութիւններու մահաբոյր հալածանքներէն:



31 Յունուար 1920-ին, Ալեքսանդրապոլի մէջ, տեղի ունեցաւ Հայաստանի Համալսարանի պաշտօնական բացման հանդիսութիւնը. անոր հիմնումը շուրջ ութը ամիս առաջ յայտարարուած էր կառավարական իրամասնագիրով: Հանդէսի առիթով իրապարակուած էր միօրեայ թերթ՝ «Հայաստանի Համալսարան» անունով: Կրթութեան եւ արուեստի նախարար Նիկոլ Աղբալեանի խօսքին մէջ յատկանշական էր հետեւեալ նախադասութիւնը.

«Այն ջահը, որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրաւանդակի վրայ, չի հանգչի երբեք եւ կը լուսաւորէ Առաջաւոր Ասիան»: Իսկ Հայաստանի մէջ Մեծն Բրիտանիոյ ներկայացուցիչ՝ Ճոն Օլիվըր Ռուրտրոպը ըսաւ՝ «Ես կ'արժանանամ, որ առաջին համալսարանի բացումը նոյնքան կարեւոր է, որքան անկախութիւնը»:

Նիկոլ Աղբալեանի պաշտօնավարութեան օրով վառած ջահը կը շարունակէ իր շուրջը լոյս սփռել դար մը ետք իր կրակի ուժգնութեան տարերային ելեւէջներով, պայմանաւորուած՝ երկրի քաղաքական, տնտեսական ու ապահովական փոփոխութիւններու տեսակէն եւ կրթութեան ոլորտին վրայ անոնց գործած ազդեցութենէն: Այսօր Հայաստանի կրթագիտական մարզը դժբախտաբար իր լաւագոյն օրերը չ'ապրիր, բայց անոր անցեալը անկասկած երաշխիք մըն է փայլուն ապագայի մը իրականացման:

Վերջին նախատեսութիւնը մեր օրերուն գաւլի կերպով արտայայտուող հայկական դատարկ մեծամտութեան մը հերթական արտայայտութիւնը չէ, այլ դեմ մօտաւոր անցեալի անհերքելի տուեալներու վրայ հիմնուած վարկած մը, որ կըրնայ իրականութիւն դառնալ մօտաւոր անցեալի

տակաւին տեսանելի հետքերուն հետեւելով: Անհերքելի է նաեւ Ճ.Օ. Ռուրտրոպի արտայայտութիւնը, որովհետեւ անկախութիւնը կայանալէն ետք կարելի է գայն պահպանել միայն լաւ պատրաստուած սերունդներով:

Տարիներու ընթացքին ԵՊՀ-ի գարգացումը, անոր ձեռքբերումներն ու տկարութիւնները, վերելքներն ու անկումները եւ անոնց պատճառները տեսանելի են պատրաստուած պաշտօնական տեղեկագիրներուն մէջ: Այդ ուղղութեամբ կ'ուզեմ ներկայացնել միայն մասնագետի մը վկայութիւնը՝ նախորդ դարու վաթսուհակն թուականներու վերջաւորութեան հայկական գիտութեան վիճակին մասին:

Գերմանիոյ Զարկարուհի համալսարանի մէջ առաջին կիսամեակս էր: Ուզեցի իմ ապագայ մասնագիտութեան վերաբերող սեմինարի մը մասնակցիլ: Փոքր ամփիթատրոնի մը նստարաններուն վրայ տեղ գրաւած տանեակ մը ուսանող կը սպասեմք առջեւի նստարանին վրայ տեղ գրաւած դասախօսներու յայտարարութիւններուն: Տեղի կ'ունենայ ներկայութեան ստուգում. վերջին անունը իմն է: Երբ բարձրաձայն կը յայտնեմ ներկայութիւնս, առաջին շարքի մէջտեղը նըստած դասախօսը ոտքի կ'ելլէ հարցնելու համար՝ «հա՛յ ես»: Դրական պատասխանը ինչեւէն ետք երկուքս ալ նստանք մեր տեղերը: Յայտարարութիւններէն ետք մտածեցի, որ այդ դասախօսը ինծի ըսելիք կամ հարցնելիք պիտի ունենայ. այդպէս չեղաւ եւ իմ հայ ըլլալուն հանդիսաւոր յայտնաբերումը անմիջական շարունակութիւնն ունեցաւ:

Ամիսներ ետք, աշխատանք մը ընելու համար, ամբողջ կիսամեակ մը յաճախեցի վերոյիշեալ դասախօսի՝ փրոֆ. Անգելմ Տիտրոնի ղեկավարած հիմնարկը: Միջավայրին ընտենալանէն ետք օր մը գործակիցներէս մէկուն պատմեցի եղելութիւնը՝ յայտնելով եղածէն բան հասկցած ըլլալս: Ընկերս բարձրաձայն խնդրեց պատմելով հետեւեալը.

«Տիտրոնը անցեալ տարի Հայաստան այցելեց եւ վերադարձէն ետք ամէն առիթով այդ մասին կը խօսի. թէ ինք ինչ եղբայրէն առաջ գաղափար չ'ունէր այդպիսի ժողովուրդի մը գոյութենէն. թէ այդ երկրէն ներս գիտութիւնը բացառիկ կերպով գարգացած է. թէ բնագիտութեան բնագաւառէն ներս անոնք ընտրած են իրենց բարձր կարողութիւններուն համապատասխան մասնագիտական առաջատար ոլորտներ: Անոնք ոչ միայն իրենց երկրին մէջ հոյակապ արդիւնքներու կը հասնին, այլ՝ փայլուն ներկայութիւն են Խորհրդային Միութեան գիտական հետախուզութեան միջազգային կառոյցներու մէջ, յատկապէս՝ Դուբնայի եւ Սերպուխովի գիտաշխատանքներուն մէջ»:

Երկար ժամանակ փորձառական կորիզային բնագիտութեան հիմնարկի ղեկավար Ա. Տիտրոնը խօսեցաւ Հայաստանի գիտական բարձր կարողականութեան եւ արդիւնքներու որակին մասին:

Նիկոլ Աղբալեանի ատենին կատարած նախատեսութիւնը անելիով իրականութիւն էր դարձած: Հայաստանի համալսարանի պատրաստած գիտական անձնակազմին շնորհիւ հայկական գիտութեան համբաւը անցած էր Առաջաւոր Ասիոյ սահմաններէն ալ անդին:

Մէկ խօսքով՝ բարձունքներ նուաճելը միշտ կարելի է:

Համալսարանի 100-ամեակին առիթով կազմակերպուած գլխաւոր ձեռնարկներն էին՝

ա. - ԵՊՀ-ի գիտական խորհուրդի հանդիսաւոր նիստը՝ համալսարանի գլխաւոր հանդիսաւորական մէջ. խօսք առին ԵՊՀ ժամանակաւոր ղեկավար փրոֆ. Գեղամ Գեորգեան, ՀՀ Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Մարմնամարզի նախարար պրն. Արայիկ Յարութիւնեան եւ ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահ՝ փրոֆ. Ռադիկ Մարտիրոսեանը: Նիստի ընթացքին որդեգրուեցաւ ակադեմիական ազատութեան մասին յայտարարութիւնը. բաժնուեցան մեղաւներ եւ վկայագրեր:

բ. - Միջազգային գիտաժողով «Բարձրագոյն կրթութիւն, գիտական հետախուզութիւն եւ նորարարութիւն 21-րդ դարուն» նիւթով: Արտասահմանէն ներկայ էին անելի քան 70 մասնակիցներ, որոնց կարգին համալսարանի 10 նախագահներ:

գ. - ԵՊՀ-ի 100-ամեակի պաշտօնական տօնակատարութիւն օփերայի մեծ դահլիճին մէջ. յաջորդաբար խօսք առին ԵՊՀ-ի ժամանակաւոր ղեկավար փրոֆ. Գեղամ Գեորգեան եւ ՀՀ վարչապետ պրն. Նիկոլ Փաշինեան:

դ. - Վերջապէս տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ Հրազդանի ճորի ճաշարաններէն մէկուն մէջ ԵՊՀ-ի անձնակազմին եւ արտասահմանեան հիւրերու մասնակցութեամբ:

Գիտական խորհուրդի պաշտօնական նիստին ընթացքին հաստատուած «ակադեմիական ազատութեան» մասին յայտարարութեան մէջ տեղ մը կը խօսուի համալսարանի ապաքաղաքականացման մասին: Եզրը յայտարարութեան գրութեան մէջ բաւարար չ'ափով բացատրուած չէ, այդ պատճառով ալ կրնայ թիրիմացութիւններու առաջնորդել: Յայտարարութիւնը իմբագրողները վստահաբար ըսել կ'ուզեն, թէ համալսարանը մէկ քաղաքական ուժի հակակշռի տակ պետք չ'է ըլլայ, նոյնիսկ երբ անոր ղեկավարութեան կազմաւորման մէջ երկրի կառավարումը ստանձնած քաղաքական ուժը, բնականօրէն, այդ ուղղութեամբ հասկնալի առաւելութիւններ վայելելու դիրքի մէջ կը գտնուի: Սակայն, ամէն պարագայի, համալսարանը այն վայրն է, ուր երիտասարդ ուսանող պիտի ստանայ քաղաքական ու քաղաքացիական դաստիարակութիւն: Այստեղ երկխօսութեան ու վիճաբանութեան միջավայր է, իրարու հետ ազատ, անկաշկանդ ու ազնիւ փոխյարաբերութեան մէջ մտնելու մթնոլորտ կայ: Մէկ խօսքով՝ երկրի ապագային վերաբերող առողջ քաղաքականութիւն հասունցնելու կարելիութիւններն ու ժամանակը առկա են:

Հին ժամանակներուն այդպիսի վայրերու մէջ գարգացած են քաղաքի, այսինքն՝ հասարակական կեանքի ու քաղաքականութեան գաղափարները Պղատոնով, Սոկրատեսով, Արիստոտելով, Նոյնիսկ Դիոգենեսով՝ որ մեր օրերու բնապահպանական շարժումի հիմնական սկզբունքներու տարագումի նախակարապետը կարելի է համարել: Անուշտ ակադեմիական ազատութեան գաղափարի առկայութիւնը, առանձին, բաւարար չ'է գործնապէս երաշխաւորելու այդ ազատութիւնը. անհրաժեշտ է, համալսարանի յայտարարագրին մէջ այլ առիթով մը ամրագրել նաեւ համալսարանական տարածքներու անձեռնմխելիութիւնը կամ ապաստանը. ինչ որ կը նշանակէ, թէ ոստիկանութիւնը համալսարանի տարածք կրնայ մուտք գործել միայն համալսարանի գլխաւոր պատասխանատուի բացայայտ դիմումին ընթացք տալով:

Նշելի է, որ պաշտօնական խօսքերուն մէջ առհասարակ բացակայ էր Հայաստանի համալսարանի գլխաւոր հիմնադիր Նիկոլ Աղբալեանի անունը՝ իբր այդ: Անոր անունը ներկայ էր հիմնուած համալսարանի դասախօսներու առաջին սերունդի ցանկին մէջ, համալսարանի առաջին ղեկավար՝ Իւրի Ղամբարեանի անունէն ետք: Նի-

ՄԱՔՐՈՆ. «ԹՈՅՆ ԳԵՆԵ ՏԱՐ, ՈՐ ԹՈՒՐԵՔԻԱՆ ՍՈՒՐԻԱ ՆԵՐԽՈՒԾԵԼՈՒ ԼՍԱԿՆԵՐ ՕԳՏԱԳՈՐԾԷ»

Երոստական հորիզոնի 70-ամեակին առիթով կազմակերպուած ձեռնարկներուն մասնակցելու նպատակով Սթրազպուրկ գտնուող Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոն խօսած է նաեւ Սուրիոյ հարցով Թուրքիոյ վարած քաղաքականութեան մասին:

Դիտել տալով, որ Թուրքիոյ մէջ իրաւունքի պաշտպաններուն, մարդու իրաւունքներու պաշտպաններուն եւ ժողովրդավարական գաղափարներու ռահվիրաներուն նկատմամբ բռնի ճնշումներ կ'իրականանան՝ քայքայելով իրաւական պետութեան հիմքերը, Ֆրանսայի նախագահը անդրադարձած է նաեւ Սուրիոյ հարցով Թուրքիոյ վարած քաղաքականութեան:



Մաքրոն շեշտած է. «Ֆրանսա թոյլ չի տար, որ Թուրքիա սուրիացի գաղթականներուն հարցը շահարկելով եւ գայն որպէս գործիք օգտագործելով ներխուժէ Սուրիա»: Ֆրանսայի նախագահին համաձայն, Թուրքիոյ վարած այդ քաղաքականութիւնը անընդունելի է:

Մաքրոն շեշտած է. «Ֆրանսա թոյլ չի տար, որ Թուրքիա սուրիացի գաղթականներուն հարցը շահարկելով եւ գայն որպէս գործիք օգտագործելով ներխուժէ Սուրիա»: Ֆրանսայի նախագահին համաձայն, Թուրքիոյ վարած այդ քաղաքականութիւնը անընդունելի է:

Նրամանու եւ Օրհնութեամբ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻՆԿԻՈՅ ՎԵՆՓԱՌ ՆՅՅՐԱՊԵՏԻՆ՝
ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա.-ԻՆ

ԱՐԵՂԱՅԱԿԱՆ ԶԵՆՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ՝
ԲՐԸ. ԳԵՐՈԳ ՍԱՐԿԱԿԻՎ ԴԱՐԻՍԱՆԵԱՆԻ

Պարարագիչ եւ Ձեռնադրիչ՝
ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲԱԶԱՆ ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ԲԵՐԻՈՅ ՆՅՅՈՅ ԹԵՄԻ

Նախկին Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցոյ մէջ.
Ա) Կոչման կարգ, որ փրկի պիտի ունենայ Շաբաթ, 5 Նոյեմբեր 2019-ի երեկոյեան ժամերգութեան ընթացքին, ժամը 6:00-ին:
Բ) Ձեռնադրութիւնը եւ Օծումը փրկի կ'ունենան Կիրակի, 6 Նոյեմբեր 2019-ին, յընթացք Ս. եւ Անմահ պարարագին:
Կը հրապրենք Ձեզ ներկայ գտնուելու հոգեպարար արարողութեանց:

Նովանորութեամբ՝
ԲԵՐԻՈՅ ՆՅՅՈՅ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԸ. Տ. ՄԱՍԻՍ ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆԻ

Կազմակերպութեամբ՝
ԲԵՐԻՈՅ ՆՅՅՈՅ ԹԵՄԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԳԻՆԵՉՕՆ
«ՎԱՐՔ ՔԱՎԱՆԱՅԻՅ» ԳԻՐՔԻՆ
Նեղինակ՝ Տէր Յուսիկ Ա. Քինյ. Սեդրակեան


Տեղի կ'ունենայ Կիրակի, 6 Նոյեմբեր 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին,
Ս. Աստուածածին եկեղեցոյ ներքնասրահը:

ՀՈԳԵՀԱՆ ԳԻՍՏ

Հանգուցեալ
Նահատակ

ԾԻԼԱ ՃԱՊԱՂՉՈՒՐԵԱՆ

Հանգուցեալի մահուան Գ. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Նոյեմբեր 2019-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Կիլկաներ - 3 շաբաթ:



ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԳՕՏԻ. ԱՆԳԱՐԱՅԻ ԲԱԽՏԱԽԱՂԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Արամ Շահնազարեան
 Alikonline-ի պատասխանատու-խմբագիր



ԱՄՆ-ի Ընդ. Ժողովի 74-րդ նստաշրջանում, Թուրքիայի նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան բարձրաձայնեց Սիրիայի հիւսիսային շրջաններում «անվտանգութեան գօտի» ձեւաւորելու անհրաժեշտութեան մասին:

ԱՄՆ-ի հետ համաձայնեցուած այս նախագիծը, ըստ Էրտողանի, հնարաւորութիւն կ'ընձեռնի շուրջ 2 միլիոն սիրիացի փախստականի՝ վերադառնալու իրենց հայրենիքը, եւ բնակուելու թուրք-ամերիկեան վերահսկողութեան տակ գտնուող անվտանգ տարածքներում: Թուրքիայի նախագահի պնդմամբ, եթէ այդ անվտանգութեան գօտին ընդլայնուի, հասնելով մինչեւ Տէր Չօր եւ Ռաքքա, ապա 3 միլիոն սիրիացի փախստական հնարաւորութիւն կ'ունենան վերադառնալու հայրենիք:

Յետաքրքրական է այն փաստը, որ Թայիպ Էրտողանի ներկայացրած նախագիծը բացայայտում է Սիրիայի հարցով Թուրքիայի քաղաքականութեան մէջ առկայ հակասութիւնը: Ընդամենը օրեր առաջ Անգարայում կայացած Իրանի, Ռուսաստանի եւ Թուրքիայի ղեկավարների հերթական հանդիպումն ընդունեց յայտարարութիւն, որում Սիրիայի հարցով Աստանայի գործընթացի երաշխաւոր երկրները՝ Ռուսաստանը, Իրանը եւ Թուրքիան յստակ նշել էին, որ հաւատարիմ են մնալու Սիրիայի տարածքային ամբողջականութեան պահպանման սկզբունքին:

Սա, ի հարկէ, միակ բարդութիւնը չէ: Թուրքիան ԱՄՆ-ի հետ լուրջ տարածայնութիւններ ունի «անվտանգութեան գօտու» սահմանների եւ նպատակների հետ կապուած: Անգարայի մշակած նախագիծը ենթադրում է առնուազն 32 քմ. խորութեամբ մի շրջան, քիւրտ գիւնեալների լիակատար դուրսբերմամբ, եւ նրանց ռազմակայանների տարհանմամբ: Մինչդեռ ԱՄՆ նախատեսում է այդ գօտին ձեւաւորել ընդամենը 10 քմ. խորութեամբ՝ առանց թուրքական Չու-ի բացառիկ եւ արտօնեալ ներկայութեան: Դեռ անելին, Ուաշինկթընի նախագիծը ենթադրում է քրտական կորիզների առկայութիւնն այդ շրջաններում՝ որպէս Անգարայի եւ Դամասկոսի դէմ ճնշման լծակ:

Նման պայմաններում, տրամաբանական հարց է առաջանում, թէ Թայիպ Էրտողանն, այնուամենայնիւ, ինչու է որոշել խաղադրոյք կատարել նման բարձր վտանգով բախտախաղում, որում իր յաջողութեան առիթները, մեղմ ասած, այնքան էլ բարձր չեն:

Խնդիրը կայանում է նրանում,

որ վերոնշեալ շրջանները, որոնք Թուրքիան եւ ԱՄՆ-ը ձգտում են առանձնացնել Սիրիայից, պարունակում են Սիրիայի նաւթի եւ կազի հիմնական պաշարները, եւ համարում են այդ երկրի ամենաբերքաւոր հողերը: Այնպէս որ, յաջողութեան դէպքում, Էրտողանի ներդրումը կարող է հատուցուել հարկերը՝ մէկի դիմաց տրամաբանութեամբ:

Այս համատեքստում, սակայն, չպէտք է մոռանալ, որ.


Նախ. Թայիպ Էրտողան սխալում է, եթէ պատկերացնում է, որ Սիրիայի իշխանութիւնները չունեն որեւէ տարբերակ, նախագիծը չեղքացնելու համար: Ինչպէս փորձագետներն են կանխատեսում, սիրիական բանակի յաջողութիւններն Իտլիպում արդէն յուշում են, որ մենք շատ մօտ ապագայում կարող ենք ակնատեսուել լինել այնպիսի անկանխատեսելի իրադարձութիւնների, որոնք շրջադարձային ազդեցութիւն կ'ունենան տարածաշրջանում ուժերի դասաւորութեան եւ հաւասարակշռութեան վրայ, անշուշտ՝ ոչ ի շահ Թուրքիայի:

Երկրորդ. պարզ ամտութիւն կը լինի ենթադրել, թէ Ռուսաստանը եւ Իրանն անարձագանգ կը թողնեն Թուրքիայի ծաւալապաշտական այս նախագիծը, որը ոչ միայն լըրջազոյն հարուած է Սիրիայի ինքնիշխանութեանն ու տարածքային ամբողջականութեանը (ինչը մշտապէս կարմիր գիծ է համարուել Մոսկուայի եւ Թեհրանի համար), այլ, ասելին, ամրագրում է նրանց հիմնական ախոյեանի՝ ԱՄՆ-ի ռազմական ներկայութիւնը Սիրիայում, որը միանշանակօրէն հակասում է նրանց տարածաշրջանային ռազմավարական շահերին:

Եւ վերջապէս երրորդը. Կրկին պարզ ամտութեան տեսակ է ենթադրել, թէ խաղում ներքաշուած Ուաշինկթընը նախաձեռնութիւնը կը զիջի Անգարային՝ բաւարարուելով միայն կատարողի եւ դիտողի, այլ ոչ թէ թելադրողի կարգավիճակով:

Եւ այս բոլորից էլ կարելի է ենթադրել, որ Թուրքիայի մշակած «անվտանգութեան գօտու» ճակատագիրը չափազանց մշուշոտ է, իսկ Էրտողանի հերթական բախտախաղը, մեծ հաւանականութեամբ՝ ձախողած:

ԱՌԱՍՊԵՆՆԵՐՈՒ ՃԱՄԲԱՆԵՐՈՎ - 12



Յուշիկ Ղազարեան

Առասպելն Ու Արուեստը

Առասպելը, ինչպես նախապես նշուած էր, մարդկային հաւաքական խիղճին արտադրանքն է, հաւաքական երազը, որ խորհրդանշաններու միջոցով կը մարմնաւորուի եւ կ'օգնէ մեր ուղեղին ըմբռնելու բարոյ ու գերմարդկային գաղափարներ: Ծիշոյ է, որ այսօրուան աշխարհը առասպելներէ հեռու է, առաւել մօտ է նիւթական մտածելակերպին, ուր խորհրդանշաններն ու վերացական գաղափարներն աւելի մեծ դեր կը խաղան շօշափելի փաստերը եւ տեղեկութիւնները, սակայն բոլոր ժամանակները ունեցած են իրենց «քուրմ»երը, որոնք այլեւայլ

փոխարինուեցաւ կրօնքով, որ կը հաւատայ ոչ թէ բնութեան վրայ ազդեցութիւն բանեցնելուն, այլ կը ջանայ աղաչանքի ու գոհաբերութիւններու միջոցով շարժել գերբնական ուժերու գուրջը, որպէսզի անոնք մարդուն կամքը կատարեն:

Կրօնական միտքի գարգացումով, քուրմերուն յաջողոջեցին վարդապետները, որոնք կանուխ եւ ուշ միջնադարուն, իրենց ճգնումով ու ճգնումով վանքերը վերածեցին դպրութեան ու գիտութեան կեդրոններու, ուր մատուցուած աղօթքը չի միտիր գերբնական ուժերուն վրայ ազդելու, ոչ ալ անոնց գուրջը շարժելու, այլ թափուած ջանք է, ճգնու-

գործել առասպելաբանական միտքը իր շարժապատկերներուն մէջ: Յոն ալ կը կայանայ անոնց մեծ ժողովրդականութեան գաղտնիքը: Մենք, հաւաքական յիշողութեան շնորհիւ, անգիտակցաբար համակրանքով կը հակադարձենք առասպելական պատմութիւններուն ու խորհրդանշաններուն եւ գանոնք հաղորդող արուեստի գործերը հարազատ ու հասկնալի կը թուին ըլլալ մեզի:

Շատ հեռու չերթալու համար, եկեք օրինակ անենք մեր շատ սիրած պատկերներէն մին՝ Մետրոպ Մաշտոցի ու Կորիւնի արձանը Երեւանի Մետրոպ Մաշտոցի անուան մատենադարանի մուտքին, հեղինակ՝ Ղուկաս Չուփարեան:

Սկսիմք արձանին դիրքէն՝ մատենադարանի մուտքին: Մատենադարանը ինքնին ճարտարապետական այնքան հիանալի գործ մըն է, կը յիշեցնէ հնադարեան ուխտատեղիները, ուր մարդիկ կը բարձրանային հետիոտն, յաճախ՝ ոտաբոսով: Մատենադարանի մուտքն ալ նոյն սկզբունքով կառուցուած է (ի դէպ նաեւ նոյն սկզբունքով կառուցուած է Ծիծեռնակաբերդի յուշահամալիրին մուտքը), որովհետեւ հոն երթալը ուխտագնացութիւն է, հաւատարմութեան ուխտի վերանորոգում մեր ազգային հնադարեան արժեքները պահպանած մագաղաթեայ մատենաներուն: Բլուրը բարձրանալէ ետք, տակաւին պէտք է բարձրանալ բազմաթիւ աստիճաններ, մտնելու համար մատենադարանի շէնքը: Ահա ճիշդ հոն, բլուրը բարձրանալուդ պէս, աստիճաններուն ճիշդ ճակտին քեզ կը դիմաւորեն Ուսուցիչն ու իր Աշակերտը: Ուսուցիչը՝ Մետրոպ Մաշտոց, բազմած է տիրապետող դիրքով: Անոր լայն ուսերն ու պարթեւ հասակը ընկալողին մէջ երկիւղածութիւն կ'արթնցնեն, ի յիշեցում այն ժամանակներուն, երբ աշակերտները առաւելաբար յարգանքով ու երկիւ-

երկնայինն ու երկրայինը իրարու միացան եւ Աստուծոյ կամքը իրականացաւ՝ Քրիստոսի գոհաբերութեամբ: Այդպէս ալ կարելի է ամփոփել Մաշտոցին կեանքը, աստուածային կոչումի եկեղեցուի ու գոհել անձնականը՝ յանուն ազգի եւ հաւատքի. այլ խօսքով՝ խաչելութեան կենդանի օրինակ մը: Մաշտոցին աչ ձեռքը ցոյց կու տայ Այբուբենը, որ իր 3x12 կամ 4x9 շարուածքներով մեր բոլորին ծանօթ ու սիրելի խորհրդանշան մը վերածուած է: Խորհրդանշան, որ աստուածատուր ըլլալու հանգամանքով արդէն առասպելականացած է եւ իր մէջ կ'ամփոփէ մեր դարաւոր մշակութիւն պատմութիւնը, քովը գրուած է Առակաց Գիրքէն առնուած է առաջին թարգմանուած նախադասութիւնը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ իմանալ զբանս հանճարոյ», որ իրականութեան մէջ այդ դրան բանալին կը թուի ըլլալ: Բազմիցս բացատրուած ու մեկնաբանուած այս նախադասութիւնը անգամ մը եւս բացատրելու գայթակղութենէն հեռու պիտի մնանք: Ուրեմն՝ Մաշտոց իր աչ ձեռքով ցոյց կու տայ դէպի գիտութիւն տանող ճամբուն դուռը՝ մեր աստուածատուր Այբուբենը եւ անոր բանալի նախադասութիւնը: Ձախ ձեռքին տեսն մեր ուշադրութիւնը պիտի դարձնենք թանաժ սուրով ու վահանով զինուած արծիւին: Արծիւը, ինչպէս նախապես անդրադարձանք, արական աստուածութեան եւ արեւապաշտութեան հետ առնչուած է: Ան կը խորհրդանշէ մտքի խորաթափանցութիւն ու պայծառատեսութիւն, երկու յատկութիւնները, որոնք իմաստուն մարդը կազմաւորելու հիմքերն են: Իսկ սուր ու վահան բռնելով կարծեք կը հաստատէ, որ իմաստութիւնն ու գիտութիւնը մարդու միակ իսկական գէնքն ու պաշտպանն են: Առասպելական խորհրդանշաններու լաւագոյն օգտագործում արդի արուեստին մէջ:



ծեւերով մարդը հաղորդակից դարձուցած են հոգեղէն աշխարհին հետ: Յնագոյն ժամանակներուն անոնք շամալներն էին, ցեղախումբերու կախարդները, որոնք կ'իրականացնէին պէտք եղած ծեսերը (ամուսնութիւն, թաղում, պատանի տղոց արբունքի ծեսեր եւ այլն): Շամալները ընդհանրապէս կը հագուէին ցեղախումբի թոթեմը յիշեցնող տարագ ու դիմակ եւ ծեսերու ընթացքին կը վերանային, կը նոյնանային գերբնական ուժերուն հետ ու կ'ազդէին դէպքերու ընթացքին վրայ: Առասպելաբան Սըր Ժէյմս Ծորը Ֆրեյզըր դիտել կու տայ, որ շամալները կա՛մ ցնորած, կամ ալ խաբեբայ մարդիկ եղած ըլլալու էին, որովհետեւ այդ ծեսերը բազմիցս կրկնելով մարդ չի կրնար չհասկնալ, որ անոնք ապարդիւն են եւ ազդեցութիւն չունին դէպքերու բնական ընթացքին վրայ: Ուրեմն կա՛մ ցնորած մարդիկ էին, որոնք կը հաւատային իրենց կատարած ծեսերու ուժին, կամ ալ խաբեբաներ էին, որոնք գիտէին, որ անոնք ապարդիւն են, բայց կը շարունակէին դերը խաղալ, պահելու իրենց իշխանութիւնն ու վայելած պատիւը:

Ժամանակ մը վերջ, սակայն, նոյնիսկ ամենէն բթամիտ մարդիկը պիտի անդրադառնային, որ կախարդական ծեսերը ապարդիւն են: Մարդարարածը սկսաւ ընդունիլ, որ ինք ոչ մէկ իշխանութիւն ունի գերմարդկային ուժերուն վրայ: Բնականաբար հաւաքականութեան հոգեւոր կարիքները հոգացող շամալը եղաւ քուրմ, իսկ կախարդութիւնը

թիւն ի նպաստ մարդու հոգիի բարձրացման ու մերձեցման գերմարդկային խտելին:

Արեւմուտքի մէջ ծայր առած վերածնունդը եւ անոր գուգահեռ ընթացող մարդկային (հումանիստ) շարժումը ջանացին տապալել կրօնքը, հերքել բոլոր հոգեւոր երեւոյթները եւ գանոնք փոխարինել նիւթական շօշափելի արժեքներով: Սակայն շարժումին կեդրոնը մարդ արարածն է, որ չ'անջատուի հոգեւոր աշխարհէն, ուրեմն, նոր դարն ալ կարիքը ուներ նոր վարդապետներու եւ հոս սկսաւ երեւան գալ արուեստագետին դերը, որպէս նոր դարու վարդապետ: Արուեստի միջոցաւ պահպանուեցան հնագոյն ծեսերը (թատրոնով ու պարարուեստով), խորհրդանշանները (կեպարուեստի ու քանդակի մէջ), առասպելաբանական պատմութիւնները (գրականութիւնն ու երաժշտութիւնն) եւ այլն: Ծիշոյ է, որ նոր դարերու վիպական հերոսը առօրեայ կեանք ապրող մարդն է, սակայն իւրաքանչիւր հերոս իր մէջ կը կրէ առասպելական հերոսի տիպարը եւ անոր գարգացումները, առանց անպայման անոր տալու գերբնական յատկութիւններ: Այլապէս վէպը կամ շարժապատկերը մեզի հետաքրքրական չի թուիր եւ կը կորսնցնէ իր փայլքը: Թերեւս շատերու գարմանալի թուի, որ ամերիկացի առասպելաբան Ճոզէֆ Բեմփայելի ուսումնասիրութիւններուն մեկնեացը եղած է Տիգրի շարժապատկերի ընկերութիւնը, որ առատօրէն օգտագործած է ու կը շարունակէ օգտա-



դածութեամբ կը մօտենային ուսուցիչին: Այդ երկիւղածութիւնն ալ կը պատկերէ Աշակերտը՝ Կորիւնը, որ ուսուցիչին մօտ ծնրադրած, անոր «բերնէն կախուած է» կ'ըսէք: Ուսուցիչին արտասանած իւրաքանչիւր բառը ինք պատրաստ է արձանագրելու նախ իր հոգիին, ապա՝ տետրակին մէջ, այնպէս ինչպէս ըրած են ու կ'ընեն բոլոր դարերու ուշիմ աշակերտները: Տիպարներու յաջող խտացում են այս երկուքը: Մաշտոց խաչելութեան նման, երկու թելերը բացած է: Խաչը հոգեւոր փորկութեան խորհրդանշան է, բայց նաեւ խաչելութիւնը այն պահն է, երբ

Այսօր, երբ մեզ մէ իւրաքանչիւրը երեւան երթայ եւ այցելէ Մետրոպ Մաշտոցի անուան մատենադարանը, բարձրանալ բլուրը ու իր առջեւ բացուի արձանին պատկերը իր վեհութեամբ, անպայման պահ մը շընչասպառ կը կենայ անոր առջեւ, կ'ըմբռնեն գեղեցկութիւնը ու թերեւս չհասկնայ, թէ ինչո՞ւ այս արձանը այնքան հարազատօրէն կարծեք կը թրթռայ իր հոգիին մէջ: Անոր մէջ կան հնագոյն դարերէն մեր հոգիներուն մէջ տեղ գրուած խորհրդանշաններ ու նոր դարերու քուրմը՝ արուեստագետը, գանոնք բացայայտելով կրկին գայն մեզի կը նուիրէ:

ՈՒՍՈՒՆԱԳՎԱՍՏԻԱՐԱԿԶՎԱԿԱԼ

ԲԱՆԱԴՈՐ ԽՕՍՔԸ ՄԵՐ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԷՆ ՆԵՐԱ



Խաչիկ Շահինեան

Մեզ մէ շատեր լաւ չեն խօսիր, նոյնիսկ մշակուած ու գարգացած մարդիկ վատ կը կարդան եւ կարողութիւն չունին քիչ թէ շատ կուրած, ճշգրիտ ու գեղեցիկ երկու խօսք արտասանելու: Այս կացութեան գլխաւոր պատասխանատուն անշուշտ դպրոցն է:

Մեր աշակերտները ընդհանրապէս մտքի պայծառութիւն եւ պարզութիւն չունին, անոնց ստացած գիտելիքները մեծ մասով անբաւարար եւ անկատար են, անոնք դպրոցին մէջ շատ բան լսած են, ինչպէս եւ բազում տեղեկութիւններ քաղած իրենց ուսուցիչներէն, սակայն սահմանափակ տարողութեամբ ի վիճակի են պատմելու իրենց գիտցածները: Որովհետեւ մեր կրթական հաստատութիւններէն ներս առաւելաբար կարեւորութիւն կ'ընծայուի լսելուն եւ գրելուն քան կենդանի, բանաւոր խօսքը գործածելուն, մասնաւոր որ ուսուցիչներ մեծամասնութեամբ իրենց աշակերտներուն կը գլանան լման խօսքի առիթը, իսկ անոնց տրուած հարցադրումներուն համար կը բաւականանան կիսատ-թերի պատասխաններով, եւ անընդհատ իրենք կը խօսին, երբ այնքան անհրաժեշտ է որ խօսին աշակերտները:

Ուսուցիչներու կողմէ յարատեւօրէն օգտագործուող հրահանգներն են. «Մտիկ ըրէ՛ք, լուռ կեցէ՛ք, ձայները կտրեցէ՛ք, մի՛ խօսիք, բերանները գոց պահեցէ՛ք, ուշադրութիւն դարձուցէ՛ք» եւ նման այլ բացազանչութիւններ: Անոնք անգիր օրէնքով մը մեր կրթարաններէն ներս ստանձնած են հեղինակաւորապէս խօսելու, հրահանգելու եւ յանդիմանելու պարտականութիւն, ուսանողներուն պարտադրելով միշտ ունկնդրողի եւ լուռ համակերպողի կրաւորական վիճակը, ինչ որ կը մղէ զանոնք (այդ փոքրահասակները) երեւութապէս մտիկ ընել ձեւանալու, բայց իրողապէս չարածնի արարքներ խորհելու կամ մանկական անմեղ դաւադրութիւններ սարքելու եւ գործադրելու:

Կրթական մշակներ առհասարակ խօսիլը մենաշնորհի վերածած են: Կը սկսին խօսիլ դասարան մուտքին հետ իսկ, առանց հարցադրումի սպասելու, կարծեք ինքնակոչ բանախօսներ ըլլան: Անոնք կը խօսին, կը քարոզեն, կը բացատրեն անընդհատ դասարանը վերածելով ճառախօսութեան ամպիոնի եւ մասնաւորապէս մոռնալով անոր համագործակցական եւ աշխատանոցային բնոյթը:

Դաստիարակներ երբեմն հարցումներ կ'ուղղեն աշակերտին, սակայն առանց պատասխանի սպասելու իրենց հարցադրումին իրենք կը պատասխանեն: Իսկ եթէ հար-

ցադրուող տղան ուշիմ, ջանասեր եւ նախանձախնդիր ըլլայ, այն ատեն կը խօսին երկուքը՝ ուսուցիչ եւ աշակերտ միասնաբար, մէկը միւսը գերազանցել փորձելով, անշուշտ ուսուցիչը միշտ անելի բարձր, անելի արագ, անելի անտեղիտալի եւ մասնաւոր՝ անելի տիրական, մինչեւ որ խուճապահար տղան անգործեան մատնուի, նահանջէ եւ լռէ... իսկ «յաղթական» ուսուցիչին բացատրութիւնները այնքան կ'երկարին, այնքան կը ծանծաղին, որ պարտասած եւ թուլցած հեք փոքրիկը, ոչ միայն կը սպառի ոտքի սպասելով, այլ անելին՝ իր խօսքը զսպելու ներքին ճիգին մէջ կ'ապրի մղձաւանջային անհանդուրժելի պահեր, ակամայ ճնշելով եւ մոխ-



րացնելով ինքնարտայայտութեան բուն ցանկութիւնն ու խանձող հրայրքը:

Աշակերտներ ընդհանրապէս կրաւորական ընդունարաններու վերածուած են մեր դպրոցներէն ներս: Ազատ, ինքնակամ եւ ինքնատիպ գործունեութիւնը, որ երեխային համար կենսատու աղբիւր է եւ գերազանցօրէն արդիւնաւետ միջոց գիտութիւն ամբարելու, գրեթէ կը մնայ անծանօթ մեր կրթական հաստատութիւններուն համար:

Այսպէս՝ ուսուցիչներ իրենց հոգածութեան վստահուած սաները անգործութեան կը մատնեն ճիշդ այն պահուն, երբ անոնց աշխուժութիւնը բարձրակէտ աստիճանի վրայ կը գտնուի: Այլ խօսքով՝ անոնք ամուրթեան կը դատապարտեն աշակերտները իրենց կիրարկած անհրապոյր, նախնական եւ կաղապարուած դասաւանդութեամբ:

Այստեղ անհրաժեշտ կը նկատենք փակագիծ մը բանալով կատարել հետեւեալ հաստատումները.

- Մենք ընդունակ ենք ճարտարութեամբ եւ սպառիչ կերպով խօսելու այն նիւթերուն եւ խնդիրներուն շուրջ, որոնց քաջապէս ծանօթ ենք:

- Երբ տիրապետած ենք որեւէ ճշմարտութեան, կրնանք բարձրա-

ձայն, պարզ, բիրեղ եւ սահուն կերպով արտայայտուիլ անոր մասին:

- Իւրաքանչիւր մտածում կամ պատկերացում իսկական սեփականութիւն կը դառնայ մեզի, երբ կը պեղենք եւ կը գտնենք զանոնք մատչելիօրէն այլոց փոխանցելու ամենադիպուկ բառերն ու ամենալարմար տարագները:

- Հասկնալի խօսքը յստակ մտածողութեան ամենաշօշափելի ապացոյցն է, իսկ իրաւ ուսուցումը հեշտ եւ բարձրաձայն խօսակցութեամբ առաջ կը տարուի:

Տարօրինակ չէ ուրեմն, որ դրոցի մը ուսումնակրթական գործընթացը գնահատելու կամ անոր մասին բաւարար գաղափար կազմելու համար, բանիմաց մարդիկ յաճախ հիմք ընդունին ուսանողներու արտաքին կերպարանքն ու վերաբերումը, եւ յատկապէս՝ անոնց կարդալու, պատասխանելու եւ խօսելու ընդունակութիւնը:

Դաստիարակչական կեանքին իրագրել մարդոց դատողութեամբ, աշակերտներու յաջողութիւնները

խօսքերը, ժամանակ մը ետք, երբ ամբողջանան երեխաներու հասունութիւնն ու գիտակցական կազմաւորումը, ինքնաբերաբար պիտի համալրուին եւ կատարելագործուին վերածուելով յստակահուն, գեղեցիկ, շինջ եւ դիւրահաս արտայայտութիւններու: Հարկ է միանգամայն կտրականապէս մերժել այն տրամաբանութիւնը, որուն համաձայն՝

- Խօսքի սխալները անպայմանօրէն մտածողութեան սխալները չեն:

- Ուսուցիչի կողմէ ի սպաս դրուած ջանքերը, երեխաներու խօսքի կարելիութիւնները մշակելու եւ բարելաւելու հետամտութեամբ, խիստ երկար ժամանակ կը խլեն եւ չափազանցեալ բժախնդրութիւն կը պահանջեն:

- Ուսանողներու ճշգրիտ խօսակցութեամբ պէտք է գբաղի գլխաւորապէս միայն լեզուի եւ բանահիւսութեան ուսուցիչը, իսկ այլ դասանիւթերու դասատուները պարտաւոր չեն այդ ուղղութեամբ որեւէ աշխատանք տանելու:

- Լաւ գրելու վարժութիւնը անելի կենսական է, քան ճարտարօրէն խօսելու սովորութիւնը:

- Աղջիկներու բարձրագոյ, համարձակ, պարզորոշ խօսիլը կրնայ վնասել անոնց իգականութեան, հեզահամբոյր նկարագրին եւ բարոյական համբաւին եւ այլն:

Ամենայնդէպս՝ կը բաւէ որ մարդիկ խօսին, որպէսզի իմանանք կամ կռահենք, թէ որոնց հետ է մեր գործը: Այս վարկածը բնականաբար անելի քան ի գօրու է դպրոցին համար: Հոն ուր երեխաները անսանձ, վճռական, աշխույժ եւ հեշտօրէն չեն խօսիր, այնտեղ ուսուցումը փայլուն ընթացքի մէջ չէ, քանի որ լաւ եւ պատշաճ արտայայտութիւնը լաւ գիտնալու ամենավաւերական ցուցանիշն է:

Բանաւոր պատասխաններու հիմամբ միայն կարելի է դատել, թէ երեխաներ ինչ աստիճանի ընկալած եւ սեփականացուցած են իրենց մատուցուած գիտելիքները: Կենդանի խօսքը անհամեմատ անելի կարեւոր է գրաւորէն, որովհետեւ բոլորս ալ անհամեմատ անելի յաճախ կը խօսինք քան կը գրենք եւ ուրիշներու ալ շատ անելի ունկ կու տանք քան կը կարդանք անոնց գրածները:

Վերջապէս, ամէն դպրոց, որ կը ձգտի իր սաները կեանքի համար նախապատրաստել եւ անոնց իրաւ կրթութիւն ջամբել, առանձնապատուկ նշանակութիւն կ'ընծայէ երեխաներու յստակ եւ արտայայտիչ ընթերցանութեան, արագ եւ որոշակի պատասխաններուն, բարձրաձայն եւ պարզաբանութեամբ խօսքին, որոնք կ'ընծեռուին ներքին ուժերու զարգացման եւ նիւթի լիակատար իւրացման շնորհիւ...: Անտարակոյս՝ միշտ հեռու վանելով քիչ ըմբռնելի կամ բոլորովին անըմբռնելի պատասխանները, անաւարտ եւ կցկըտուր բառերը, փսփսալու կամ գրեթէ անլսելի ձայնով քիթին տակէն մրթմրթալու խոցելի եւ անընդունելի սովորութիւնները:

ԲԱՆԵՐՈՒ ԳԱՆՁԱՐԱՆԻՆ ՄԵՋ - 4

«ՅՕ» ԵՒ «ՅԻ», ՅԻՍՈՒՄ ԵՒ ՅԻՄՍԻՍ, ՅԱԲԱՆԻԼ ՈՒ ՅԱԲԱԿՆԻԼ



ԼԵՆՈՆ ԸԱՆՈՅԵԱՆ

«ՅՕ» եւ «ՅԻ»: Մասամբ նմանաձայն երկու տառեր՝ մեր այբուբենին մէջ: Ես պիտի համարձակիմ ըսել՝ երկու վտանգաւոր լարուած թակարդներ, որոնց հանգոյցին մէջ կը գլտորին-կ'իյնան ո՛չ միայն մեր դըպրոցական ամեն հասակի աշակերտները, այլեւ՝ գրեթէ ամեն հայորդի, որ ձանձրոյթը յանձն կ'առնէ իր մայրենիով քանի մը տող գրելու...:



Այսինչ կամ այնինչ բառը «հօ»ով գրել, թէ՛ «յի»ով: Այս շփոթն ու երկմտանքը մեղադրելի չէ բնաւ, որովհետեւ մարդիկ կ'ապագայ կ'անճշտութիւնով բառասկզբի «Ի» հնչիւնին դիմաց՝ եթէ հմտացած ու խորացած չէ հայերէնի քերականութեան ու բառակազմութեան մէջ:

Ահա՛ «հօ»ով սկսող փունջ մը բառեր.

-Յակառակ, հաղորդել, հաճոյք, հանգոյց, հակիրճ, հապճեպ, հաջել, հարիւր, հաւատք, հեղեղ, հեզել, հեզնել, հետամուտ, հիանալի, հինգ, հիմնել, հիւլէ, հոգալ, հորթ, հունձք, հսկել, հրաւեր, հրճուիլ...:

Եւ ահա՛ «յի»ով սկսող փունջ մը.

-Յագենալ, յախճապակի, յաղթել, յաճախել, յամառ, յամենալ, յայտագիր, յայտնել, յանդիմանել, յանկարծ, յանձնել, յանցանք, յաշողիլ, յաշորդ, յառաջանալ, յատուկ, յարաբերիլ, յարատեւել, յարգել, յարձակիլ, յարմար, յաւելեալ, յափշտակել, յեղափոխութիւն, յետամնաց, յետոյ, յիշատակ, յիսուն, յոգնութիւն, յորդորել, յուզուիլ, յոյս, յոլացաւ, յօժար, յօնք, յօրանջել, յօրինել...:

Ինչպէ՛ս բառնալ այս դժուարութիւնը: Կա՞ն օրէնքներ, որոնց հետեւելով՝ նուազագոյնի կրնանք իջեցնել **հ-յ** շփոթը:

Ինձի կը թուի թէ բուն շփոթը «յի»ով սկսող բառերուն կը վերաբերի: Հայ աշակերտը (կամ հայ մարդը ամհասարակ) հակամետ է **Ի** հնչիւնով արտասանող բառերը մեծաւ մասամբ «հօ»ով գրելու: «ՅԻ»ն շարունակ կը մնայ կասկածելի գիր մը, շատերու համար՝ ընդհանրապէս անգոյ, աննշմար: Մեր վարժարաններու երկրորդական բարձրագոյն կարգերուն մէջ ես յաճախ կը հանդիպիմ Զրիստոսի անունը սխալ՝ «**Յիստու**» ձեւով, գրող աշակերտներու, հակառակ որ այդ նոյն աշակերտները տասը տարիէ ի վեր հայկական դպրոց կը յաճախեն ու տասը տարիէ՛ կրօնի տասը տար-

բեր դասագիրքեր ունեցեր են իրենց տրամադրութեան տակ...: Այդ դասագիրքերուն մէջ Յիստուսի անունը գրեթէ ամեն էջի վրայ դրոշմուած է, սակայն բառին ուղղագրութիւնը չէ՛ իւրացուած շատ-շատերու կողմէ:

Դժուարութիւնը անյաղթահարելի է, թէ՛ շարունակական անտարբերութիւն ու անտեսում մը ինդրոյ ամարկայ է:

Գրեթէ ո՛չ ոք սխալ կը գրէ **հաւատք, հսկել** կամ **հիմնել** բառերը, բայց ամէն ոք... սխալ կը գրէ **յանձնելը, յաւելեալը** կամ **յուզարկաւորը** (պատահականօրինակներէն): Արեւելահայ մեր եղբայրները, սովետական շրջանին (1922), պետական հրահանգով «փրկուեցան» բառասկզբի «յի»էն ամբողջովին ու զայն փոխարինեցին «հօ»ով: Սկսան գրել **հանձնել, հաւելեալ** կամ **հուզարկաւոր** (աւելի ճշգրիտ ըլլալու համար՝ վերջին երկուքը արեւելահայկական ուղղագրական նոր համակարգի բերումով կը գրուին «**հավելյալ**» եւ «**հուզարկավոր**» ձեւով...):

Ինչպէս կը տեսնուի, հայերէն բառերու արտաքին պատկերներն անգամ աղաւաղուեցան, անճշտի դարձան, որովհետեւ փոփոխութիւնը միայն բառասկզբի «յի»ին չէր վերաբերէր: Բառամեջի «օ»երն ու «է»երն ալ վերացան, երկբարբառները (եա, եօ, ոյ, իւ...) ջնջուեցան, կարծելով թօթափել մե՛ծ բռն մը: Սակայն այս յեղափոխութիւնը արեւելահայ մեր գանգուածները նետեց խրամատի մը մէջ. անոնք կորսնցուցին այդ բառերուն ԱՐՄԱՏՆԵՐԸ ՃԱՆՉՆԱԿԸ ԵՒ զանոնք ՍՏՈՒԳԱԲԱՆԵԼՈՒ այնքան էական տուեալները...: Չորօրինակ, հայաստանցի ուսանողը եթէ փորձէ ստուգաբանել սա «**հաւելյալ**»ը, արդեօք բառարանին մէջ «**հաւ**» եւ «**հաւնոց**» բառերո՞ւն պիտի դիմէ...: Միևնուեռ դասական ուղղագրութեամբ՝ «**յաւելեալ**»ին կազմութիւնը արեւու նման յստակ է. - բառասկզբի «յի»ն գրաբարէն եկած նախդիր է, իսկ բառին արմատը «**աւելի**» ածականը կամ «**աւելալ**» բայն է: «**Յաւելեալ**» կը նշանակէ ավելցած, լրացուցիչ: «**Բանուորները վարձատրուեցան իրենց յաւելեալ աշխատանքին համար**»:

Մալխասեան բառարանը «յի»ով սկսող բառերուն յատկացուցեր է 43 էջ: Ատոր դիմաց՝ «**հօ**» գիրով սկսող բառերը գրաւեր են 148 էջ: Տարբերութիւնը շատ մեծ է ու կը հաստատէ «**հօ**»ին գերակշռութիւնը «յի»ին վրայ: Այնուհանդերձ, ուղղագրական սխալագրութեանց «ամբաստանեալ»ը միշտ «յի»ն է...:

Եկէ՛ք յիշենք «յի»ին գործածութեան դաշտերը: Անոնք երեք են.


ա) Բառերուն սկիզբը, միշտ «**հը**» ձայնով (փունջ մը օրինակներ տուիմք վերը):

բ) Բառերուն մէջը, միշտ «**եը**»

ձայնով: Օրինակ՝ **կայարան, գոյն, սակայն, այգի, եղբայր**: Անշուշտ պետք է գատորոշել ածանցեալ կամ բարդ այն բառերը, որոնց երկրորդ մասը «յի»-ով բառ մըն է. - **երկարկանի, անյայտ, բարեյիշատակ, սալայատակ**...: Անոնց մէջ կը պահուի «**հը**» ձայնը:

գ) Բառերուն վերջը, անձայն ու համր վիճակով: Օրինակ՝ **վկայ, քահանայ, ապագայ, հաւաքածոյ, երեկոյ, քաղցրաբարոյ, յետոյ**: Յատուկ է պարագան միավանկ բառերուն, որոնց վերջը հանդիպող «յի»ն կ'ունենայ «**եը**» ձայնը, ինչպէս՝ **հայ, բայ, խոյ, թեյ**...:

Բառասկզբի «յի»ն ճանչնալու առնչութեամբ՝ մեր քերականագետները շօշափելի օժանդակութիւն մը չեն կրնար տալ մեզի, դժբախտաբար: Յակոբ Չոլաքեան իր «**Հայերէնի ավանդական ուղղագրութիւն**» գրքոյկին մէջ (Հալեպ, 2000) կը շեշտէ որ **հ-յ** շփոթը վերացնելու համար «բառերուն մեծ մասը պետք է սերտորոյթեամբ իւրացնել»: Նոյն գաղափարը կը կրկնէ Հիլտա Գալֆայեան-Փանտաստեսի «**Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ**»ին մէջ (Երեւան, 2009), ցուցակագրելով «յի»ով սկսող 150 բառեր ու թելադրելով որ զանոնք ՄՏԱՊԱՅԵՆ...:



Յամենայն դէպս, կրնանք գոնէ երեք բանալիներ տրամադրել՝ «յի»ի գաղտնի դմները բանալու համար.

ա) Բացարձակ օրէնք է՝ որ «**դ**» գիրէն առաջ միշտ «յի» կը դրուի, այլ ո՛չ թէ «**հօ**»: Օրինակ՝ **յղի, յղել, յղկել, յղփանալ**...: Միւս բոլոր բաղաձայններէն առաջ «**հօ**» կու գայ, բացի «**յստակ**» բառէն:

բ) Օտար լեզուներու մէջ **յ**-ով սկսող յատուկ անուններն ու հասարակ բառերը երբ հայերէնի կը տառադարձուին՝ «յի»ով կը գրուին: Օրինակ՝ Յիսուս-Jesus, Յակոբ-Jacob, Յովնան-John, Յորդանան-Jordan, յասմիկ-jasmine, յոբելեան-jubilee, Յունուար-January, Յուլիս-July...:

գ) Հայ մարդը (կամ աշակեր-

տը) եթէ քիչ մը վարժութիւն ձեռք բերէ բառերը ճանչնալու իրենց արմատներուն մէջ՝ հետզհետէ դիւրաւ պիտի կռահէ, որ բազմաթիւ բառերու սկիզբը «յի»ն ԱՅԱՆՅ է: Օրինակ՝ յափշտակել (պի բառէն), յարձակիլ (արձակ բառէն), յօրինել (օրէնք բառէն), յարգել (արգ արմատէն, յիշել՝ մեծարգոյ բառը), յուզարկաւորութիւն (ուզարկել բառէն), յուշամատեան (ուշ՝ միտք բառէն) եւ այլն: Այս կալուածին մէջ եթէ քիչ մը խորանաք, կը վստահեցնեմ ձեզ՝ որ շատ հետաքրքրական հորիզոններ պիտի բացուին ձեր առջեւ:

*
Հիմա ալ արագ պտոյտ մը ընենք վերնագրիս մէջ երեւցած քանի մը բառերուն շուրջ:

«**Յիստու**»ը բացատրութեան չի կարօտիր, մանաւանդ որ անոր ուղղագրութեան պատճառաբանեալ բացատրութիւնը տուիմք արդէն: Բայց «**հիւսիս**»ը, որ քիչ մը դժուարահունչ բառ է եւ այդ պատճառով ալ շատեր սխալ կը գրեն զայն, արժանի է փոքր ակնարկի մը:

Հիւսիս: Հորիզոնի չորս գլխաւոր կողմերէն մէկն է անկիկա: Արեւելք, արեւմուտք, հիւսիս եւ հարաւ: Անպայման գիտեք, որ հիւսիսէն փչող քամիները ցրտաշունչ կ'ըլլան...: Բառարանս «**հիւսիս**»ով կազմուած քանի մը բարդ ու ածանցաւոր բառեր ալ շարայարեր է: Անոնցմէ մին «**հիւսիսափայլ**»ն է, որուն բացատրութիւնը տրուած է սա՛յպս. «**Գեղեցիկ լուսեղէն երեւոյթ, որ երբեմն կը նկատուի հիւսիսային բեւեռի կողմէն՝ բազմատեսակ ձեւերով ու գոյներով եւ կը տարածուի շատ հեռուները**»: Օդերեւութաբանական կամ տիեզերագիտական երեւոյթ մըն է, ուրեմն:

Հիւսիսափայլը ամիջապէս գիւ մտովին կը տանի... Մոսկուա, ուր 1858-64, արեւելահայ փայլուն եւ լուսամիտ մտաւորական մը՝ Ստեփանոս Նազարեանց, հրատարակեց նոյն անունով ուշագրաւ պարբերական մը՝ «**Հիւսիսափայլ**» ամսագիրը: Իր գլխաւոր աշխատակիցներէն մին ազատատենչ բանաստեղծ Միքայէլ Նալբանդեանն էր, որուն հրապարակախօսական եւ արձակ ծաւալուն գրութիւնները հո՛ս տպուեցան շարունակ, լայն արձագանգ գտնելով: «**Հիւսիսափայլ**» դարձաւ աշխարհաբարի կողմնակից արեւելահայ յառաջապահ մտաւորականներու առաջին ժամադրափայլը ու գաղափարական դարբնոցը, որուն կը հակադրուէին նոյն շրջանին Մոսկուա կամ Թիֆլիս լոյս տեսնող երեք պահպանողական թերթեր՝ «**Ճառքաղ**», «**Մեղու Հայաստանի**» եւ «**Կռունկ Հայոց Աշխարհի**»:

Հիւսիսը, կամ ընդհանրապէս՝ հորիզոնի չորս կողմերուն յիշատակութիւնը, իմ մտքին մէջ անպայման կ'արթնցնէ Հայոց. Եկեղեցւոյ գմայլելի մէկ արարողութեան պատկերը: Այդ արարողութիւնը կը կոչուի **Անդաստան**: Մեր եկեղեցիները հաշվերացի տօնին եւ այլ առիթներով շատ հանդիսաւոր արարողակարգով մը Անդաստանի օրինութիւն կը կատարեն, այսինքն՝ հոգեւորական-

Անդրադարձ

ԱԶԱՏ ԽՕՍՔՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՆՏՈՒՄԻՆԸ (ՍՓԻՒՔԱ)ՅԱՅ ՄԱՍՈՒԼԻՆ ՄԷՋ

և. Տեր Ղուկասեան

Որքան որ գիտեմ «Գանձասար»ի «Ազատ Խօսքի Ընկալման Զարգեր» խմբագրականին բովանդակութիւնը եւ գայն հրապարակային քննարկումի դնելու առաջարկը առաջինն են իրենց տեսակին մէջ: Ողջունելի նախաձեռնութիւն մը, որ, կ'ընդունիմ, սկիզբը դժուարութիւն ունեցայ հասկնալու, անոր ընդառաջելու առաջարկը, ապա եւ այդ մասին գրելու տեսանկիւն մը ճշդելու: Պատճառը այն է, որ հայ մամուլին հետեւողներս, ընդ որում ի մասնաւորի սփիւռքահայերս, որ ընթերցողներ ենք նաեւ մեր ապրած երկիրներու թէ միջազգային մամուլին, լրագրութեան պատասխանատուութիւնը կը հասկնանք որպէս ազատ խօսքի պաշտպանութիւն ընդդէմ կեղծ լուրերու տարածման, կամ «ֆէյք» լրահոսի, եւ իրականութեան բացայայտման: Անմիջապէս յստակացնեմ որ «սփիւռքահայերս» կ'ըսեմ պարզապէս որովհետեւ այս ակնարկը գրելով նկատի ունիմ սփիւռքեան մամուլը եւ յատկապէս գրաւոր մամուլը: Զայրելի մամուլին ու լրահոսին հետեւելով հանդերձ անհրաժեշտ ծանօթութիւնն ու հաղորդակցութեան միջոցներու մասնագիտացումը չունիմ հիմնաւորում չկարծիք բանաձեւելու համար անոր մասին: Ազատ խօսքը, հետեւաբար, լրատուութեան ոլորտին մէջ կ'արտայայտուի ի մասնաւորի երբ մամուլը կը բացայայտէ պետական այն գաղտնիքները, որոնք



կը խախտեն սահմանադրական կարգը, օրէնքը, կը բռնաբարեն հանրային ինչքը (public good) նիւթական ըլլայ այդ թէ բարոյական եւ կը բացայայտեն իշխանութեան չարաշահման պարագաներ:

Խօսքը կը վերաբերի Ուաթըր-Կէյթի գայթակղութեան բացայայտումէն մինչեւ Փանամա Փէյվիըրը, որոնք ժողովրդավարութեան ժամանակներու իսկական հերոսապատումներ են: Արեւմտեան աշխարհին մէջ խօսքի ազատութեան եւ հետազօտող լրագրութեան յառաջապահներուն այս համարձակութիւնը իր կարեւորութիւնը կը ստանար Պաղ Պատերազմի ոլորտին մէջ պարզ այն պատճառով, որ ամբողջատիրական կարգերու տակ լրագրութիւնը ենթակայ էր պետական գրաքննութեան՝ «պատասխանատուութեան» այն հասկացողութեամբ, որ միաժամանակ իշխանութիւնը՝ միակուսակցական համակարգ, գինուորական կառավարութիւն թէ անձնիշխանութիւն, որեւէ տարբերակ չունէր... Արեւմուտքի մէջ լրագրողներուն համարձակու-


թիւնը անշուշտ կը հակադրուէր ամբողջատիրական կարգերուն, բայց նաեւ ցոյց կու տար, թէ ժողովրդավարական երկիրներու մէջ ալ խօսքի ազատութեան մեծագոյն պատասխանատուութիւնը իշխանութիւններու, թէ ընդհանրապէս պետական համակարգի, ուժային դիրքի չարաշահումներուն դէմ դիրքորոշուիլն էր: Եւ որքա՛ն կարելոր կը թուի այս մէկը, եթէ նկատի ունենանք բացայայտ սուտի վրայ հիմնուած 2003-ի իրաքեան ներխուժման ու գրաւման օրը ճորճ Պուշի ադիտալի արկածախնդրութեան մեղսակից դարձած ԱՄՆ-ի զանգուածային հաղորդակցութեանց մեծ քորփորէշըներուն ամօթալի վերաբերմունքը... Խօսքի ազատութեան այս տիպի մեծ պատասխանատուութիւնը այսօր կը վերաբերի ոչ միայն պետական չարաշահումներու, այլ մանաւանդ մեծ կապիտալի (դրամագլուխի-«Գ.») գայթակղութիւններու բացայայտման քաջութեան:

Այս բոլորէն շատ հեռու է սփիւռքահայ մամուլը իրականութիւնը եւ պատճառը շատ հաւանաբար իր պատմական հոլովոյթն է: Մեր համայնքային իրականութիւնը, ապրած երկրի քաղաքականութենէն ընդհանրապէս հեռու մնալու «գաւազաւորութիւնը», կարգ մը հազուագիտ բացառութիւններով, ընդհանրապէս, որեւէ հանրածանօթ հայ անհատի «ազգային ինքնութիւնը» անբիժ պահելու նախանձխանդութեամբ, սփիւռքահայ մամուլը եւ մամուլը պատասխանատուները շատ ակնթիւ շեշտաւորած են «պատասխանատուութիւնը», քան խօսքի ազատութիւնը: Աւելի՛ն, խօսքի ազատութեան փաստը, ամենայն սանձարձակութեամբ եւ յաճախ պատասխանատուութեան ամեն գիտակցութենէ անտարբեր, ինքզինք պարտադրեց հասարակական ցանցերուն մէջ:

Զիմա, հասարակական ցանցերու սանձարձակութիւնն է, որ սփիւռքահայ մամուլը պատասխանատուները, լրագրողները, թէ ընդհանրապէս ընթերցող հասարակութիւնը դէմ յանդիման կը դնէ խօսքի ազատութեան եւ պատասխանատուութեան հարցի քննարկման անհրաժեշտութեան: Թերեւս հասարակական ցանցերը խթան հանդիսացած ըլլան նման քննարկման անհրաժեշտութեան, բայց արմատական պատճառը, ինչպէս Շահան Գանտահարեան ճիշդ կը դիտէ, սփիւռքահայ մամուլի ընդհանրապէս կուսակցականապատկանութեան յատկանիշն է –յարգելով բացառութիւնները: Սփիւռքահայ մամուլը իր վրայ վերցուցած է ոչ միայն լրահոսի պատասխանատուութիւնը, այլ նաեւ հայապահպանման պարտականութիւնը, ինքզինք նկատած է համայնքներու լայն իմաստով գաղափարական դաստիարակութեան ճահիլիրայ եւ, ընդհանրապէս, հեռու մնացած է հետա-

Ազատութեան Անկիւն

ՆԱՄԱԿ ՄԸ՝ ՍԵՐՏ ԸՆԿԵՐՈՋՍ



Սազո Պալապանեան

Սիրելի՛ս,
Մեր Առաջին հանդիպումը եղաւ շատ ջերմ ու մտերմիկ: Շատ փոքր էիր, ծայրայեղ խնամքի պէտք ունէիր: Խնամեցի քեզ, գուրգուրացի եւ դուն օրըստօրէ մեծցար ու զօրացար:

Զիմա կ'ապրիսք նոյն երդիքին տակ: Արդէն հասակ առած ես եւ զօրացած: Անսահման սիրով եւ ուրախութեամբ կը ներշնչես զիս: Անպայմանական սերդ եւ վերաբերմունքդ քեզ վեր կը պահէ իմ ունեցած բոլոր ընկերութիւններէս եւ յարաբերութիւններէս: Աչքերուդ մէջ նայելուս, կը տեսնեմ եւ կ'ապրիմ բոլոր գագուսներդ: ԶԷ՞ որ ես եմ քու աշխարհդ, չէ՞ որ քու գոյութիւնդ կախեալ է ինձմէ: Ես ունիմ շատ ու տեսակաւոր ընկերներ, բայց քու միակ ու միակ բարեկամդ ես եմ:

Իմ քնքուշ եւ գթասեր բարեկամ:

Զակառակ անխօս ըլլալուդ, շատ բաներ սորվեցուցիր ինձի: Սորվեցուցիր հաւատարմութիւնն ու երախտապարտութիւնը, անսահման սերն ու անշահախնդիր յարաբերութիւնը:

Շա՛տ շնորհակալ եմ, որ միշտ ու միշտ կը լսես զիս, կը սպիացնես հոգիիս վերջերը քու եռանդուն եւ գուրգուրոտ շարժումներով:

Մենք հասկցած ենք զիրար:

Շնորհակալութիւնն որ ներկայ ես իմ կեանքին մէջ: Շնորհակալութիւնն անսահման սիրոյդ, ազնուութեանդ եւ հաւատարմութեանդ համար:

Շնորհակալ եմ, իմ անուշիկ ընկեր, չէ՞ որ քու միջոցաւ կրնամ իգական սերին ուշադրութիւնը գրաւել եւ բոլորին հետաքրքրութիւնը արթնցնել՝ քու մասին խօսելով եւ չարածճիւղութիւններդ պատմելով:

Իմ միակ եւ անկեղծ բարեկամ:

Իմ սիրուն շնիկ:

գօտական լրագրութեան (investigative journalism) մարզէն: Զարցը, հետեւաբար, ոչ թէ որովհետեւ թէկուզ եւ «պետականազուրկ» ազգի մեր սփիւռքեան գոյավիճակի իրականութիւնը գուրկ էր համայնքային հաստատութիւններէ ներս «իշխանութեան» թէ այլ կերպի չարաշահումներէ, այլ որովհետեւ միշտ ալ անկայ եղած է սփիւռքահայ մամուլի հայապահպանման առաքելութեան մը առաջինահերթային գիտակցութիւնը: Ինչ որ չափով, պիտի խոստովանի՝ ինքնագրաքննութիւնը:

Այս իմաստով Սիրիան Զիր-տոզլեանի դիտարկումները կուսակցական կարգապահութեան հասկացողութեան եւ ազատ խօսքի յանձնառութեան մասին ամենէն դիպուկն են, եւ թէ իրապարակագիրներու նոր սերունդ մը ինքզինք վերադաստիարակէ այդ դիտարկումներու հետեւումով, կրնանք մինչեւ իսկ լաւատես ըլլալ սփիւռքահայ մամուլին նոր փուլ թեւակոխելուն իմաստով: Փուլ մը, որ կրնայ մինչեւ իսկ նոր հետաքրքրութիւն ստեղծել մամուլը օրկաններուն հանդէպ, լայնցնել անոնց ընթերցողներու շրջանակը:

Դետեւաբար, եւ շարունակելով Սիրիան Զիրտոզլեանի դիտարկումներու ուղին, քննադատական, եւ թերեւս ինքնաքննադատական նոյն այդ մօտեցումով պիտի ուզէի լուսարձակի տակ առնել ընդհանրապէս մեր մամուլը յօդուածագիրներուն այս օրերուն խիստ անհրաժեշտ քննադատական եւ ինքնաքննադատական մօտեցումը: Խօսքը կը վերաբերի հայապահպանման անհրաժեշտութեան եւ արմատացած հասկացողութեան մը բառապաշարին եւ լճացած մտքերուն ապակառուցման (deconstruction) համարձակութեան, ուր եւ պէտք է տեսնել խօսքի ազատութեան պատասխանա-

տուութիւնը: Սփիւռքեան միթօս մը (առասպել-«Գ.») կայ, ուր տիրապետող է «նահանջ»ի, «ճուլում»ի եւ «ճերմակ ջարդ»ի փայթողով մը (ախտաբանութիւն-«Գ.»), որուն «հանգըստաւետութեան սահման»էն (comfort zone) անդին չենք ուզեր անցնիլ:

Օրինակի համար թապուի վերածուած է ներագգային եւ մինչեւ իսկ ներկուսակցական ոլորտի մէջ բազմազանութեան, տարակարծութեան եւ, ինչու չէ, բազմաշերտութեան անդրադարձը եւ կարծես միշտ անհրաժեշտ է «ազգային միասնականութեան» կամ «կարգապահութեան» մասին հրապարակային ճառերու ծափահարումը: Զաղաքական, կուսակցական թէ համայնքային ղեկավարութիւնները բնականաբար պիտի շարունակեն այդ լեզուով խօսիլ: Բայց այդ մէկը պատճառ չէ որ լրագրողները թէ յօդուածագիրները նախաձեռնող չլլան մեր ներագգային ամեն ձեւի տարակարծութիւններու եւ ամեն բնոյթի տարբերութիւններու, ինչպէս օրինակի համար՝ դասակարգային, իրականութիւնը պեղելու եւ այդ մասին գրելու: Ի վերջոյ այդ մէկը միայն բնական է աշխարհացրի սփիւռքեան իրականութեան համար, այնպէս ինչպէս բնական է լեզուամտածողական տարբեր ոլորտներու մէջ ծնած ու մեծցած չորրորդ սերունդի եւ հասակ առնող հինգերորդ սերունդի ազգային ինքնութեան հասկացողութիւնը: Աւելի՛ն, այդ տարբերութիւններու անդրադարձն ու հրապարակային քննարկումն են, որոնք ազգային միասնականութեան պիտի առաջնորդեն համասփիւռքեան այսօր գրեթէ բացակայ «տիպիկ»ի մը միջոցաւ: Դն է որ ես կը տեսնեմ խօսքի ազատութեան պատասխանատուութիւնը 21-րդ դար մտած սփիւռքեան գոյավիճակին մէջ:

ԱՐԱՐԻՆ ՎԵԿՆԵՐ ԽՆՈՐԱԾ Է ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԵՆ՝ ԶԳՐԵԼ ԻՐ «ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՔԱՆՁԱՄՈՒՄՈՒ ՕՐԵՐԸ» ՎԷՐՈՑ

(Բ. ՄԱՍ)



Յարութ Սասունեան

Ասիկա Արսինժ. Վեկների 1932-ին գրած նամակին շարունակութիւնն է, ուղղուած՝ Ֆրանց Վերֆելի: Այս նամակին ամբողջութիւնը կը հրապարակուի առաջին անգամ ըլլալով:

«Արդէն 1915-ին ես ընկերացած էի Եոհաննէս Լեփսիուսի հետ: Երբ գնացքով կը ճամբորդէի Կոստանդնուպոլսէն Փոքր Ասիոյ տարածքով դէպի Պաղտատ, ականատես եղայ



ամբողջ տեղահանութեան: Ես շատ նիւթեր ուղարկած եմ Լեփսիուսի՝ իր հաւաքածոյին համար: Քանի մը տարի շարունակ սերտ յարաբերութիւններ վարած եմ հայերու եւ թուրքերու հետ, իստած եմ անոնց լեզուով, թէն՝ ոչ կատարելաբար: Լուսանկարները, զորոս ես առած էի անապատի սարսափելի տեսարաններէ, թաքուն տեղափոխած եմ՝ զանոնք պահելով ստամոքսիս վիրակապին տակ: Մահուան վտանգի տակ ես անոնք սահմանէ անցուցած եմ՝ գաղթականներու նամակներուն հետ միասին, որոնք ուղղուած էին ամերիկեան դեսպանատուններուն:

«1919-ին, Ուրանիոյ (Պերլիսի գիտական հասարակութիւն) մէջ տեղի ունեցած հրապարակային ձեռնարկի մը ընթացքին, Եոհաննէս Լեփսիուսի օգնութեամբ ես ցուցադրեցի այդ լուսանկարները, զգայացունց դասախօսութեան ընթացքին: Ասոր ի հետեւանք՝ գրեթէ շարդ սկսան ներգաղթեալ հայերու եւ թուրքերու միջեւ: Շատ չանցած՝ ես հրապարակեցի «Ճամբայ՝ Առանց Վերադարձի» («Der Weg Ohne Heimkehr») գիրքս՝ բացայայտելով այդ օրերու անձնական փորձառութիւններս: Ես շարադրեցի տեղահանութեան օրերուն ապրած փորձառութիւններուս մեծ մասը, հայկական վեպիս համար:

«Կարճ ընդմիջումներով լոյս տեսան եւս երկու գիրքեր՝ «Երջանկութեան Տան Մէջ» («Im Hause der Glückseligkeit») եւ իմ՝ «Թրքական

Վեպեր»ը («Tiscrkische Novellen»), որոնք Նոյնպէս կը բովանդակէին երկու պատմութիւններ հայերու հալածանքներու մասին: Գրեթէ միաժամանակ, 1921-ին, իմ «Փոթորիկ Կիներու Բաղնիքին Մէջ» («Der Sturm auf das Frauenbad») վեպը՝ հայոց կոտորածներու նկարագրութեամբ, տպուեցաւ Berliner Tageblatt-ի մէջ: Նոյն թուականին ես տպագրեցի «Թալեաթ Փաշայի Դատական Գործը» («Der Prozess Talaat Pascha»), որուն իբրեւ վկայ հրաւիրուած էի Եոհաննէս Լեփսիուսի եւ այլոց հետ:

«1925-ին ես սկսայ գրել իմ հայկական վեպը, որ արդէն ծրագրած էի պատերազմի ժամանակ: Աշխատութեանս առաջին յայտարարութիւնները կարելի է գտնել միեւնոյն ատեն՝ Քիրշնըր եւ Ալպերթ Սորկելի գրականութեան պատմութեան մէջ, ուր գիրքը յայտարարուած էր «Արտաքսում» վերնագիրով («Die Austreibung»): Սակայն, քանի որ ես նպատակադրած էի պատկերել մարդկային ամբողջ ցեղի մը տեղահանութեան եւ ոչնչացման հսկայածաւալ դիցազնավեպը, ես շուտով հասկցայ, որ աշխատութիւնս մասնակի կ'ըլլայ, եթէ ես զիս սահմանափակեմ միայն այս ողբերգութեան աւարտը նկարագրելով:

«Այսպիսով, այս աշխատութիւնը աւելի ու աւելի կը հասունանար ձեռքիս տակ, քան այն, ինչ որ ի սկզբանէ ծրագրած էի: Ասոր մէջ պետք էր ներկայացուէին ամբողջ ժողովուրդի մը ճակատագիրը եւ Մերձաւոր Արեւելքի ժողովուրդներու պայքարը: Մերկացուած էր ցեղերու, կրօններու եւ դասերու թշնամութիւնը: Ասիկա ոչ թէ իմ կամքն էր, այլ՝ ստեղծագործութեան ներքին բնոյթը, որ դարձաւ քառահատոր վեպ: Ես հակիրճ կը ներկայացնեմ նախագիծի ուրուագիծը, որ բաժնեկցեցայ Կաճառին հետ, երկու տարի առաջ:

«Առաջին հատորը նուիրուած է վեպի նախապատմութեան՝ գլխաւոր հերոսի երիտասարդութեան. ան ծնած էր 1890-ին, ասիական փոքր քաղաքի մը մէջ: 1896-ին, Ապտիւլ Յամիտի կոտորածներու ժամանակ, ան կը կորսնցնէ իր ծնողները եւ որբ կը մեծնայ Երուսաղէմի սուրիական որբանոցին մէջ: Այնուհետեւ, առաջին հատորի իրական բովանդակութիւնը կը նկարագրէ ասիական փոքր քաղաքի կեանքը, թուրքերու եւ հայերու հակադրութիւնը, անոնց հակամարտութիւնը, ինչպէս նաեւ՝ ընդհանուր յեղափոխական գործունեութիւնը, եւ վերջապէս կը տանի դէպի Կոստանդնուպոլիս՝ Ապտիւլ Յամիտի պալատը: Հատորը կ'ունեն-

այ «Աստուծոյ Շուքին Տակ» խորագիրը:

«Երկրորդ հատորը՝ «Յաւերժական Ատելութիւն» խորագիրով, սկիզբը կը տանի դէպի հայկական գիւղի լեռները: Հոն ցոյց կը տրուի քիւրտերու եւ հայերու միջեւ եղած տարբերութիւնները եւ, ի վերջոյ, կը նկարագրէ Փոքր Ասիոյ եւ Կոստանդնուպոլսոյ մէջ 1908-ի յեղափոխութեան բռնկումը, Ապտիւլ Յամիտի տապալումը, երիտթուրքերու յաղթանակը, եւ կ'աւարտի սահմանադրութեան դարաշրջանին թուրքերու եւ հայերու ընդհանուր եղբայրացումով եւ հաշտեցումով:

«Երրորդ հատորը, որ հաւանաբար պիտի կրէ «Ծիչ Արարատի» վերնագիրը, կը սկսի համաշխարհային պատերազմի բռնկման նկարագրութեամբ: Այս հատորը կը բովանդակէ նաեւ Լեփսիուսի եւ Էնվեր փաշայի գրոյցը, զոր Լեփսիուս ինքն է, որ այդքան տպաւորիչ արձանագրած է: Վեպը մնայուն կեր-



պով կը շարժի իշխող դասերու, իշխանութիւններու եւ մարդոց միջեւ: Իրենց դերը ունեցած են երիտթուրքերու ղեկավարները եւ Եւրոպայի ամբողջ դիւանագիտութիւնը: Գիրքը կ'աւարտի տեղահանութեան փաստացի մեկնարկով:

«Չորրորդ հատորը՝ «Անապատը» խորագիրով, նուիրուած է հայ ժողովուրդի բնաջնջման, Միջագետքի տափաստաններու մէջ: Այս հատուածը կը բովանդակէ նաեւ այն երկու հազար գաղթականներու տեսարանները, որոնք փրկուեցան լեռան վրայ, իսկ այնուհետեւ Անթանթի նաւերով բերուեցան Եգիպտոս, տեսարաններ, զորոս կը կարծեմ ոգեշնչած են ձեր ծրագրած գիրքին վերնագիրը՝ «Մուսա Լերան Քառասուն Օրերը»: Վերջին հատորին վերջաբանը կը նկարագրէ Թալեաթ փաշայի սպանութիւնը Պերլիսի փողոցներուն մէջ:

«Կ'ակնկալուի, որ ամբողջ աշխատութիւնը պահպանէ բազմաթիւ անգամ յայտարարուած «Ար-

տաքսում» վերնագիրը:

«Թէն ես սկսայ վեպը գրել տակաւին 1924 թուականին, բայց անկա ընդհատուեցաւ բանաստեղծական եւ լրագրական այլ գործերով: 1925-1927 նախագիծը հասունցաւ իր ամբողջ ծաւալով, եւ 1930-ի սկիզբը ես ստիպուեցայ անգամ մը եւս սկսիլ ամբողջ գործը: 1928-ին «Մոնի» վեպս (երկու տարեկան մանուկի մասին) հրատարակուեցաւ Berliner Tageblatt-ի մէջ: Նոյն օրերուն ես գիրքը առաջարկեցի Վիեննայի «Չտոլնայ» հրատարակչութեան (մարտ 1928) եւ յայտարարեցի պայմանագիրով իմ պատրաստակաւութեանս մասին՝ իմ ծրագրած աշխատանքին՝ հայկական վեպին, իբրեւ ժողովուրդի հրաշալի նկարագրութիւն: Բայց «Չտոլնայ»-ն մերժեց: Այնուհետեւ ես պայմանագիր կնքեցի Deutsche Verlags-Anstalt-ի հետ, Շթուրթարթի մէջ (գարուն, 1928), հայկական տեղահանութեան վերաբերեալ իմ բազմահատոր վեպիս համար, եւ այդ ժամանակ զգալի գումար ստացայ:

«Տնտեսական մեծ դժուարութիւնները, ընտանիքը կերակրելու ճնշումը եւ միւս գիրքերուս ոչ այնքան գոհացուցիչ վաճառքը դանդաղեցուցին աշխատանքը: Նիւթական պարտաւորութիւններէ մեկնած՝ ես

ստիպուած էի կրկին ու կրկին ընդունիլ կատարել լրագրական մեծածաւալ աշխատանք, ինչ որ կը պահանջէր երկարատես ուղեւորութիւններ՝ դէպի այլ երկիրներ: 1930-ին Թոմաս Ման իմ անուսով դիմեց Փրուսիոյ արուեստի կաճառ (բանաստեղծութեան բաժին)՝ յիշելով աշխատութիւնս: Ասոր նախաձեռնութեամբ ես Կաճառ ներկայացուցի իմ հայկական մեծ վեպին աւելի մանրամասն ծրագիրը: Ես թուարկեցի վերոնշեալ անհատական հատորներու տարբեր հատուածները: Բարեբախտաբար Կաճառը զգալի աջակցութիւն ցուցաբերեց ինձի՝ այս աշխատանքին համար: Սակայն, ցաւօք, այդ բոլոր գումարները բաւարար չէին, որ թոյլ տային ինձի՝ հանգստ միտքով աշխատիլ այս հսկայածաւալ գործին վրայ»:

(Շարունակութիւնը՝ յաջորդ շաբաթ) Արեւելահայերէնի թարգմանեց՝ ՌՈՒՉԱՆՆԱ ԱՄԿԵԱՆ Արեւմտահայերէնի վերածեց՝ ՍԵՂԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄՏԱՄԱՐԶԱՆՔ



ԽԱՉԲԱՌ (ՄՆ 314)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

Հորիզոնական

- Ֆիզիկոս: Խոշոր, յարդ:
- Բարձրածել կառույց: Ձայնաւոր տառեր:
- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Հակառակ՝ շարունակ: Սիամանթոյի ծննդավայրը:
- Հակառակ՝ տառի մը հարեւանները: Իրարայաջորդ տառեր: Հակառակ՝ տառի մը անունը:
- Հակառակ՝ երկինչին: Աստուծոյ ուխտն ու պատգամները պարունակող գիրք:
- Նաւախումբ: Հակառակ՝ գոյութիւն ունին:
- Հակառակ՝ 301: Տառի մը անունը: Հակառակ՝ գոյութիւն ունին: Հակառակ՝ Եական բայ:
- Ոսպածել հունտերով բոյս: Մակաբոյծ միջատ:
- Ոլոր, փայթոյթ: Հակառակ՝ հայ նահապետ:
- Ճիւղ: Ս. Պատարագին օրհնուած հաց:
- Կաթի երեսի իւղ: Հակառակ՝ գրաբար «օր»:
- «Փուր Թուա Արմենի», «Իլ Սոն Թոմաթ» եւ «Աւե Մարիա» երգերու հեղինակը:

Ուղղահայեաց

- Շառաւիղ, նոր ճիւղ: Հաստ պարան:
- Ծառի տեսակ մը: Հակառակ եւ անվերջնատառ՝ օղակ:
- Հակառակ՝ լեզուով մը «այո»: Հակառակ՝ աղեղի թել:
- Սաստիկ ծեծի ենթարկել: Եւս:
- Եական բայ: Հայերէն լեզուի հոլովներէն:
- Անվճռական: 2006:
- Շրջանակ գծելու երկճիւղ գործիք: Տառի մը անունը:
- Ցորեղը ալիւրի վերածել: Արական անուն:
- Տարածքի միաւոր: Վահան Փափագեանի ծածկանունը:
- Ծիրանի գօտի: 7001: Հակառակ՝ յարաբերական դերանուն:
- Ուղղութիւն տուող գործիք: Հակառակ՝ պտոյտ: Կրկնուած բաղաձայններ:
- Ճարտնական թատրոն: Կեանք տուող:

ԻՇՆԱՆ...

Սկիզբ՝ էջ 3

ասնական, չկան հին եւ նոր Հայաստաններ, չկայ դարաբաղձի, հայաստանցի, իջեւանցի, կիւմիեցի, լիբանանցի, կայ մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք, մէկ հիմնական նպատակ՝ ազատ, անկախ, միացեալ Հայաստան»:

Ապա իր խօսքը արտասանեց ՅՅԴ Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան

Յակոբ Բագրատունի, որ շեշտեց, թէ միշտ միասին, միշտ կողք կողքի ըլլալը՝ յանուն հայ ժողովուրդին, եղած է ու կը շարունակէ մնալ լիբանանահայութեան գոյութեան իմաստը, պայքարի նպատակը, տանամեակներու պատմութիւնը, որ փաստօրէն կը պահէ իր հնչեղութիւնն ու խորքայնութիւնը՝ սփիւռքի արիւնատար երակին՝ Պուրճ Համուտի դաշտը լեցուցած եւ «Մի՛շտ միասին» կարգախօսին ներքեւ համախմբուած ժողովուրդին պարզած տպաւորիչ պատկերով:

Պատրաստեց Մարինա Զիւլբոյեան-Պողիկեան ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 313)

Տեղադրէ՛ (1-9) թուանշանները (9x9) քառակուսիներուն մէջ այնպէս, որ իւրաքանչիւր հորիզոնական եւ ուղղահայեաց տողի մէջ, ինչպէս նաեւ (3x3) տուփիկի մէջ մէկ անգամ արձանագրուին:

	8		4	3				
7						6		4
		2			5	8		
5	2						1	8
	4		1	5	9			
		9				3		
8		7	2			1		9
		4						6
				8	3		7	

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 84)

Չահրատի գրական ստեղծագործութիւնները շնչելով գտէ՛ք պահուած բառը:

Պահուած բառը 8 տառերէ կը բաղկանայ եւ կը ներկայացնէ Չահրատի բանաստեղծութիւններէն մէկը:

գ	ի	պ	ա	բ	ա	խ	ա	դ	է
մ	ն	մ	ի	ի	գ	է	բ	օ	ջ
լ	չ	հ	դ	կ	բ	կ	է	ս	մ
ա	լ	է	ա	ս	կ	ի	ն	ք	ի
բ	ժ	ա	գ	բ	տ	լ	ա	բ	ա
մ	հ	լ	բ	ի	է	կ	ն	բ	ծ
ս	ա	ա	ն	շ	շ	բ	ն	ւ	ի
յ	շ	ց	ս	ն	ա	է	ն	դ	ն
ն	ի	ի	պ	փ	ն	է	բ	ւ	բ
լ	ւ	մ	ա	յ	մ	ն	ւ	ն	մ

«Չոհաբերում», «Պարսխաղ», «Մծեղի Հաշիւ», «Չերօ», «Մայմուն», «Էջմիածին», «Մի Լար Լոյս Մի Լար», «Ոսպ Ստկող Կինը», «Լացի Գիշեր», «Փոշի», «Կրկես», «Լու»

ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ԽԱՉԲԱՌ (ՄՆ 313)

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ա	մ	ա	հ	բ	ա	ն	ի	խ	ա
2	է	ն	ա	բ	լ	ն	ւ	բ	կ	ա	ն
3	ն	ի	գ	ն	ա	բ	ա	յ	ն		
4	է	ն	ի	ւ	ն	ա	ն	ն	ւ		
5	կ	բ	ի	լ	ա	մ	կ	ա	բ		
6	ա	ն	ի	ա	լ	ի	ա	բ	ջ		
7	լ	է	բ	դ	ա	պ	ա	ա	ն	ն	է
8	ն	լ	ի	ա	ն	ա	լ	ա	լ	չ	է
9	մ	ա	բ	ա	կ	ա	ն	ա	բ		
10	ա	մ	պ	է	ա	բ	է	խ			
11	ն	մ	ա	ն	ա	ն	ա	ն	է	մ	
12	բ	է	ա	ա	յ	բ	ա	բ	ի	լ	

ՍՈՒՏՈՔՈՒ (ՄՍ 312)

1	2	4	3	8	5	6	7	9
6	3	7	2	4	9	5	8	1
9	5	8	6	1	7	2	3	4
4	8	3	9	7	6	1	5	2
7	6	2	8	5	1	4	9	3
5	1	9	4	3	2	7	6	8
8	4	1	5	6	3	9	2	7
2	7	5	1	9	8	3	4	6
3	9	6	7	2	4	8	1	5

ՊԱՅՈՒՄԾ ԲԱՌ (ՄՊ 83)

Պահուած բառը՝ «Կարօտի Թեւաբախումներ»

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Պետք է համբերություն ունենաք, որպեսզի ձեր հարցերը լուծվեն: Պետք է ընդունիք ձեր շուրջինները այնպես, ինչպես որ են:



ՑՈՒԼ

Նոր արկածախնդրության դիմել ամառ պետք է դասաւորեք ձեր ժամանակը: Ամսուան հաճելի եւ օգտակար շաբաթներն մեկն է:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Յաջողություն եւ նոր յոյսեր պիտի ունենաք: Ներողամիտ աչքով նայեցեք ձեր շուրջիններուն:



ԽԵՅՁԵՏԻՆ

Առանց մտածելու՝ խօսք մի՛ առնեք եւ քննարկումի մի՛ մասնակցիք: Բախտաւոր շրջան մըն է, պետք է օգտուիք առիթէն:



ԱՌԻՑ

Ձեր ուժին վստահեցեք եւ բախտին յոյս մի՛ կապեք: Առիթ պիտի տրուի ձեզի՝ ձեր կարողութիւնները երեւան հանելու: Մի՛ միջամտեք ձեզի չվերաբերող հարցերուն:



ԿՈՅՍ

Ձեր իմաստութեան շնորհիւ պիտի յաջողիք սիրաշահիլ նոյնիսկ ձեր մրցակիցները:



ԿՇԻՈՔ

Օգտագործեցեք ձեր կարողութիւնները՝ ձեր նիւթական վիճակը բարելաւելու: Մի՛ հաւատաք ձեզի ըսուած բոլոր խօսքերուն:



ԿԱՐԻՃ

Գնահատական մը պիտի ստանաք ձեր գործին մէջ, ինչ որ առիթ պիտի տայ, որ աւելի եռանդով կատարեք ձեր գործը:



ԱՂԵՂԱՍՈՐ

Մեծ ճիգ պիտի թափեք՝ յաջողցնելու ձեր մէկ ծրագիրը: Ձեր աշխատանքային մտահոգութիւնները տեղին պիտի չըլլան:



ԱՅՏԵՂՁԻՐ

Հաստատ քայլերով պիտի յառաջանաք դէպի ձեր նպատակը: Պիտի յաջողիք ձեր բազմաթիւ ծրագրերը: Վստահութիւն պիտի ներշնչէք նաեւ ձեր շուրջիններուն:



ՋՐՈՍ

Պիտի աշխատիք ամբողջացնել ձեր աշխատանքը՝ ձեր լաւագոյնը տալով: Ծառեր պիտի հմայուին ձեր բծախնդիր աշխատանքով: Դրական դեր պիտի խաղաք ձեր միջավայրին մէջ:



ՋՈՒԿ

Ձեզ հանդարտեցնող լուր մը պիտի ստանաք: Խնայողութիւն պետք է կատարեք, որպեսզի ձեր պետական բոլոր տուրքերը կարենաք վճարել:



ԵՐԵՒԱՆ ԻՆՉՊԵՍ ՈՒՆԿՆԴՐՈՂ ԴՎՐՁՆԵԼ

Առաւօտեան կ'արթննաք, կը պատրաստուիք աշխատանքի մեկնելու, երեխան տանելու մանկապարտեզ/դպրոց, միևնույն ան կը հրաժարի հազնիլ դպրոցական տարագր եւ դուրս ելլել տունէն: Կը փորձեք երեխան երաժշտանոց տանիլ՝ դաշնամուրի կամ որեւէ այլ նուագարանի դասի, իսկ ան յամառօրէն կը հրաժարի երթալէ, չի փա-



վաքիք տնային պարտականութիւնները կատարել եւ այլն: Դուք ամէն գնով կը պայքարիք ու կը ստիպեք, որ ան կատարէ ձեր փափաքները, որովհետեւ քաջ գիտեք, որ ան ըմբռնող ու տաղանդաւոր երեխայ է, հետեւաբար պետք է կատարեալ ըլլայ ամէն բանի մէջ:

Բոլորս ալ մերթ ընդ մերթ բախում կ'ունենանք երեխային անհնազանդութեան այս կամ այն դրսեւորումին հետ: Այս պայքարին մէջ յաճախ չենք կրնար կողմնորոշուիլ՝ ի՞նչ ընել՝ տեղի տալ՝ երեխային փափաքին, թե՞ այնչէլ մեր ըսածը: Կեանքի արագ ընթաց կշռոյթը, երբեմն նոյնիսկ ձեր ժամանակին նեղ ըլլալը չեն թողոր, որ երկար ատեն գրուցեք ու երեխային հետ միասնաբար լուծումներ գտնեք:

Ինչո՞ւ երեխային հնազանդութիւն կ'ակնկալեք:

Երբեմն մենք կը փորձենք մեր կամքը թելադրել երեխաներուն՝ առանց մտածելու, թէ այդ մէկը մե՞զ կը նպաստէ, թէ երեխային: Երեք դգալ աւելի ճաշ ուտել (Աստուած մի առասցէ անօթութենէն չտկարանայ մեր փոքրիկը), արագ չվագել, որ է՝ իյնայ (թե՞ ոտքը կտորի), ժամերով ջութակ նուագելու փորձ ընել՝ սահուն արտաբերելու համար (երաժշտական կրթութիւն ունենալը շատ կարեւոր է) կամ քաջալերել զինք միայն այն պարագային, երբ ան ընդունուի բժշկական համալսարան, ոչ թէ իր նախընտրած գեղարուեստի բաժինը (քանի՞ բժիշկ կը ճանչնաք, որ լաւ աշխատանք ունի եւ քանի՞ արուեստագետ որ քիչ դրամ կը վաստկի): Այս բոլորը մտածելով դուք ոչ թէ երեխային կարիքներուն գոհացում տալ կը փորձեք, այլ ծնողական ձեռքներ ակնկալութիւններուն: Յանկարծ մեր բարեկամները չմտածեն, թէ մենք վատ ծնողք ենք, որովհետեւ մեր երեխան նիհար է, միւս կողմէ ալ հպարտանանք, որ մեր որդին բժիշկ պիտի ըլլայ կամ բոլորին գաւակներուն նման ձեր գաւակն ալ անպայման երաժշտական գործիք մը նուագէ:

Անկեղծ եղեք դուք ձեզի հետ եւ կը տեսնեք, որ շատ մը հարցերու մէջ այլեւս կարիք չկայ հնազանդութիւն պահանջել երեխայէն:

Ուրեմն, Պահպանեցէ՛ք հաւասարակշռութիւնը ձեր եւ երեխային փափաքներուն միջեւ:

Չանց առէ՛ք երեխան հնազանդ դարձնելու պարտադրանքը:

Կիրարկեցէ՛ք լծակներ, որպեսզի երեխան ձեզի ականջ տայ առաջին իսկ վայրկեանէն:

Ո՛չ խիստ եղէք, ոչ ալ թուլամորթ:

Օրինակ՝ երբ տուն մտնեք եւ փափաքիք, որ երեխան հանէ կօշիկները: Միայն մէկ անգամ ըսեք իրեն այդ մէկը: Ձեր ըսածը աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենայ, եթէ խօսիք՝ նայելով երեխային աչքերուն մէջ, ոչ թէ հեռուէն պոռալով: Առանց այս քայլին, շատ դժուար է երեխային բան մը հասկցնել, քանի որ ան տարուած է իր միտքերով: Ուստի ի սկզբանէ անոր ուշադրութիւնը գրաւելու համար, առնուազն անոր տեսադաշտին մէջ պիտի ըլլաք:

Եթէ կը նայիք անոր աչքերուն, բան մը կ'ըսեք, եւ ան ձեր ըսածը չի գործադրեր, անհրաժեշտ է անցնիլ երկրորդ քայլին՝ առանց կրկնելու այն, ինչ ըսած էք: Այսինքն՝ անցնիլ գործողութեան: Կօշիկներու պարագային, կրնայ լաւ օրինակ ըլլալ այն, որ դուք մօտենաք եւ հանեք երեխային կօշիկները: Ձեր կատարած գործողութեան մասին բարձրաձայն հետեւեալը յայտնելով՝ «հիմա միասին կը հանենք կօշիկները»: Եւ այսպէս ամէն անգամ, բոլոր նմանատիպ իրավիճակներուն մէջ:

Երբ երեխան կը հրաժարի առաջին անգամ մէն ձեր թելադրածը կատարել, յաջորդ քայլը պիտի ըլլայ որեւէ լծակ կիրառելը՝ որպեսզի ան անմիջապէս կատարէ մեր փափաքած գործողութիւնը:

Ի՞նչ կը հասկանանք լծակ ըսելով՝ որեւէ գործողութիւն, որուն հետեւանքով երեխան կը կատարէ ձեր հրահանգը: Քիչ մը հնարամտութիւն եւ դուք կը հասնիք ձեր ուզածին: Կամ օրինակ, կրնաք յամառօրէն կանգնիլ երեխային կողքին եւ սպասել, մինչեւ որ ան տեղէն շարժի:



Փափաքելի չէ պատիժը կամ սպառնալիքը որպէս լծակ կիրառելու: Պատիժը կ'ենթադրէ ծանր յանցանք, իսկ սպառնական ոճով խօսիլը սխալ հետեւանքներու կ'առաջնորդէ երեխան:

Միշտ պետք է պահպանել հանդարտութիւնը եւ վստահ ըլլալ, որ երեխան պիտի գործադրէ ձեր ըսածը եթէ ճկունութեամբ վարուիք իրեն հետ:

Եթէ գործերով ծանրաբեռնուած էք ու ժամանակ չունիք յատկացնելու անոր, սպասեցէ՛ք մինչեւ յարմար առիթը յայտնուի, կամ ալ մինչեւ որ երեխան կամաւոր կերպով իրագործէ ձեր ըսածը: Այսպիսով, դուք կը խուսափիք երեխային բացասական հակազդեցութենէն:

Եզրակացութիւն. եթէ օրուան ընթացքին ձեր կամքը ամէն հարցով չթելադրեք երեխային, անոր ազատութիւն տաք, կիրառեք զինք հասկնալու խաղաթուղթը, թելադրեք միայն մէկ անգամ եւ հետեւիք անոր մինչեւ որ կատարէ ձեր ըսածը, ձեր երեխան կրնայ դարձնել ե՛ւ ունկնդրող, ե՛ւ ուժեղ կամքով օժտուած երեխայ:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՅՕ» ԵՒ «ՅԻ»...

Սկիզբ՝ ԼԶ 9

Ներ ու դպիրներ խաչեր, խաչվառներ ու մուներ բռնած կը կանգնին ատենանին մէջ ու կ'օրհնեն երկրին չորս կողմերը, «յարեւելից եւ յարեւմուտս, ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ»: Տեսակ մը «աշխարհօրհնէք»՝ Պոլսոյ Շնորհք պատրիարքին բնորոշումով: Արեւելքը օրհնուած ատեն՝ կ'օրհնուի Հայոց Հանրապետութիւնը, արեւմուտքը օրհնուած ատեն՝ կ'օրհնուին քրիստոնէայ ազգերն ու թագաւորութիւնները, հարաւը կ'օրհնուի՝ իբրեւ խորհրդանիշ արգասաբեր ու պտղաշատ արտերու, իսկ հիւսիսը կ'օրհնուի՝ վանքերը, մենաստանները, քաղաքներն ու գիւղերը նկատի առնելով: Մեր մեծ նահատակը՝ Դանիէլ Վարուժան, իր ամենէն գեղեցիկ բանաստեղծութիւններէն մէկը կոչած էր «Անդաստան», հաւանաբար ներշնչուելով եկեղեցական այդ արարողութենէն: Ինք ալ մի ամ մի մաղթանքներ կը յղէր աշխարհի չորս կողմերուն, իսկ հիւսիսի մասին կը գրէր.

Հիւսիսային կողմն աշխարհի Առատութիւն թող ըլլայ... Ոսկէ ծովուն մէջ ցորեանին Յաւետ լողայ թող գերանդին. Ու լայն ամբարն աղուներուն երբ բացուի, Բերկրութիւն թող ըլլայ:

«Հիւսիս» բառը պէտք չէ շփոթել «հիւսել» բային հետ, որուն արմատը «հիւս» է: Հիւսել՝ թել աշխատիլ՝ իրարու մէջ անցընելով: Մագերը հիւսել, խսիր հիւսել, ծաղիկէ պսակներ հիւսել, պատ հիւսել: Կարելի է նաեւ պատմութիւններ կամ հեքիաթներ հիւսել՝ շարադրել իմաստով: Տակաւին կարելի է մեկու մը գովքը հիւսել, այսինքն՝ գայն գովաբանել: Ունիք «բանահիւսութիւն» բառը, որով կը հասկնանք մեր հին անգիր գրականութիւնը, որ բերնէ բերան փոխանցուած է: Պոլսահայ մամուլի ներքին լրատուութիւններուն մէջ յաճախ կը հանդիպիմ սիրուն բառի մը՝ «գեղահիւս»: «Սըրբազան Հայրը Կիրակիի Ս. Պատարագին գեղահիւս քարոզ մը խօսեցաւ», կը գրեն լրագիրները, դրուատելով սրբազանին պերճախօսութիւնը...:

Բայց կայ ուրիշ բառ մըն ալ, որ իր կարգին բնաւ պէտք չէ շփոթել «հիւսել» բային հետ: Անկկա «հիւսն» գոյականն է: «Հիւսն» կը նշանակէ (շատ պիտի գարմանաք) փայտի վրայ աշխատող գործաւոր: Այսինքն՝ մեզի ծանօթ կահագործը կամ ատաղճագործը, որ աթոռ-սեղան-փեղկ կը շինէ:

Բառերը երբեմն որքա՞ն ճարպիկութեամբ, ստուերներու մէջէն, խաղեր կը սարքեն մեր գլխուն...:

Հաւանիլ եւ յաւակնիլ: Որքա՞ն դիւրահունչ եւ իմաստալից երկու բառեր: Կը գործածենք գանուք մեր առօրեային մէջ: Թերեւս չենք գիտեր ասոնցմէ մեկուն կամ միւսին իմաստը:

«Հաւանիլ» կը նշանակէ յօժարիլ, համաձայնիլ, ընդունիլ, հաճութիւն յայտնել: «Ընտանիքին բոլոր անդամները հաւանեցան այդ առաջարկին, բացի Յովսէփէն, որ դեմ արտայայտուեցաւ»:

Արմատը «հաւան»ն է, եւ ասկէ կազմուած են **հաւանութիւն, հաւանական, հաւանաբար, դիւրահաւան, ինքնահաւան** բառերը:

Տարակոյս չկայ, որ «հաւանիլ» (իր ճաշակին համապատասխան գտնել, ախորժիլ) բայն ալ յառաջ եկած է այս նոյն արմատէն: «Շատ հաւանեցայ այդ աղջիկը»:

Իսկ «յաւակնիլ» կը նշանակէ մտադրութիւն ունենալ, հետամուտ ըլլալ, ձգտիլ (բան մը ձեռք բերելու կամ բանի մը տիրանալու): «Վաչէն կը յաւակնի անպայման առաջնութիւն շահիլ ճատրակի մրցումին»: Ունիք «յաւակնոտ» ածականը, որ ժխտական իմաստ ունի եւ մատնանիշ կ'ընէ մեծամիտ մարդը՝ որ ինքն իր անձին մասին մեծ համարում ունի:

«Հօ»ին ու «յի»ին հրաժեշտ տալէ առաջ՝ վերջին յիշեցում մը եւս. - «Հ.»ն հոգեւորականներու, մանաւանդ Մխիթարեան վարդապետներու անունին առջեւ դրուած գիր է՝ «հայր» իմաստով:

Օրհնեալ ըլլայ յիշատակը Հ. Արսէն Բագրատունիին, Հ. Դեռնդ Ալիշանին, Հ. Արսէն Այտընեանին, Հ. Ներսէ Ակինեանին եւ միւս բոլոր անկրկնելի երախտաւորներուն՝ ի Վենետիկ եւ ի Վիեննա...:

ՀԱՅԱՍՏԱՆ...

Սկիզբ՝ ԼԶ 5

Կոլ Աղբալեանի անունը իբրեւ համալսարանի հիմնադիր հնչեց միայն մէկ անգամ՝ ԵՊՀ գիտական խորհուրդի նիստին ընթացքին փրոֆ. Ռ. Մարտիրոսեանի բերնէն:

Արդար ըլլալու համար պէտք է միաժամանակ այստեղ յիշել, որ Նիկոլ Աղբալեանի կիսանդրին գետեղուած է ԵՊՀ-ի գլխաւոր մուտքէն անմիջապէս տեղ, առաջին կարգի վրայ՝ աշխարհահռչակ աստղաբանագետ Վիկտոր Համբարձումեանին հետ:

Նիկոլ Աղբալեանի անունը երիտասարդական, համալսարանական եւ ընդհանրապէս մտաւորական շրջանակներէ ներս ամէն առիթով շեշտելը ժամավաճարութիւն չէ: Մտաւորականը իր գիտութեամբ պիտի ծառայէ ամենէն առաջ իր հարազատ հասարակութեան գարգացման ու մշակութային վերելքին: Այդպէս կը դաւանէր Ն. Աղբալեան եւ այդպէս էր ինք: Մեր հասարակութիւնը կարիքը ունի մտաւորականի խօսքին եւ ուղղութեան:

Մեր ընդհանուր հասարակութեան սխալներու բազմութիւնն ու բազմազանութիւնը հաւանաբար, գէթ մասամբ, արդիւնք են այդ խօսքի բացակայութեան: Այդ պատճառով՝ Ն. Աղբալեանը եւ ընդհանրապէս իր տեսակը ընդօրինակելի տիպար է: Ուղեղները հարկ է հետեւողականօրէն մրճահարել իրենց օրինակով եւ անոնց խօսքով:

ՅԻՇԱՏԱԿԸ ԱՆԹԱՌԱՍ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՅ ՀԱՄԱՏԱԻՐ ԶԻՆՈՒՐԻՆ

Մահուան Զառասուկին Առիթով



Կարելի չէ հաւատալ, թէ ճիշդ քառասուն օրեր առաջ, դարանակալ մահը իր ընտանիքէն, ծնողքէն, հարազատներէն եւ մեզմէ անժամանակօրէն առյաւէտ բաժնեց պատուական հայորդի մը, հանգուցեալ Գեորգ Ալեքսանի Ազեգեանը: Հանգուցեալը երրորդ գաւակն էր բարեպաշտ, շնորհալի եւ ազգային ծառայութեան ըմբռնում ու ոգի ունեցող ընտանիքի մը, որուն հովանիին ներքեւ ձեւաւորուած էին անոր յառաջիկայ հետաքրքրութիւնները:

Ծնած էր Հալէպ, 1956-ին, եւ մինչեւ մահը կապուած մնաց ծննդավայրին: Ուսումը ստացած էր Կիլիկեան Կրթական Հաստատութենէն ներս: Մանուկ տարիքին ծնողքին կողմէ առաջնորդուեցաւ եկեղեցի, ուր ամբողջ քսաներկու տարի մաս կազմեց Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Դպրաց Դասին, զուգահեռաբար յաճախելով Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն, որուն ընթացքը ակարտեց յաջողութեամբ եւ անմիջապէս մաս կազմեց ուսուցչական կազմին:

Հանգուցեալ Գեորգ Ազեգեանի կեանքին եւ ծառայութեան բոլորակը մնացին Հայ Եկեղեցին եւ Կիրակնօրեայ Դպրոցը:

Ան որպէս Թաղական Խորհուրդի անդամ ծառայեց Սրբոց Զառասուկից Մանկանց Մայր Եկեղեցւոյ, նոյնպէս մաս կազմեց Բերիոյ Հայոց Թեմի Զրիստոնեական Դաստիարակութեան Խորհուրդին, սակայն նուիրուին պսակը հանդիսացան երեսունութը տարի միանուագ իր անսակարկ ծառայութիւնն ու վաւերական ներդրումը՝ Կիրակնօրեայ Դպրոցներու Կեդրոն ներս, ուր պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ իր կատարած բազմակողմանի գործունէութիւններուն կողքին, յատկապէս մշտարթուն եւ անզիջող պահապանը եղաւ Հայ Եկեղեցւոյ եւ քրիստոնեական սկզբունքներուն ճշգրիտ ուսուցման, իր իսկ կեանքով ու գործով վկայելով քրիստոնեական կրօնի բարոյական արժեքներուն մասին, վճռապէս մերժեց սխալը, ապրեցաւ, գործեց եւ ծառայեց լոյսերէն հեռու, խոնարհաբար ու համեստութեամբ:

Որպէս գործարար, ստացած ընտանեկան եւ կրօնաբարոյական դաստիարակութեանց թելադրութեամբ, նիւթը բնաւ նշանակութիւն չունեցաւ իրեն համար, ոչ ալ ցուցադրական կեցուածքներով նիւթին ետին ծուարեցաւ: Պարզապէս արուեստագետի ոգին միշտ ներգործեց իր մէջ, Հանգուցեալը որպէս ջութակահար վկայուած է Հալէպի Պետական Երաժշտանոցէն, եւ շրջան մը Հալէպի հայկական միութիւններու թատերական ելոյթներուն երաժշտական ձեւաւորումները իրեն կը պարտիւք: Երկար տարիներ աշակերտած է ՀԲԸՄ-ի «Մարտիրոս Սարեան» Գծագրական Ակադեմիային: Հալէպի Պետական Թանգարանի պատկերասրահէն ներս կազմակերպուած անհատական ցուցահանդէսը՝ ինքնուրոյն ոճին շնորհիւ, գինք դասած է սուրիացի արիւեստաւարժ գեղանկարիչներու շարքին:

Ան կազմեց իր ընտանիքը, եւ կեանքին միակ հաճոյքը մնաց ընտանեկան յարկը: Աւելին, իբրեւ պարկեշտ ու պատուաւոր ամուսին եւ ընտանիքի հայր, կնոջը եւ երկու գաւակներուն հետ, ընտանեցոյ յաճախեց կիրակնօրեայ դպրոց եւ ծառայեց անոր:

Եւ վերջապէս Հանգուցեալը կեանքին բոլոր դժուարութիւնները դիմագրաւեց լուրջութեամբ, անտրտունջ, երբեք պահանջողի դիրքին մէջ չեղաւ, առանց ի հաշիւ Աստուծոյ հանդէպ ունեցած հաւատքին եւ պայծառ աչքերուն յոյսի ցոլքին:

Անժամանակ մահը մեզմէ առյաւէտ բաժնեց Գեորգ Ազեգեանը, սակայն վստահաբար հոգին հիմա երկնային լոյսերուն մէջ կը ննչէ:

Յանուն Առաջնորդ Սրբազան Հօր, Ազգ. Իշխանութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու մեծ ընտանիքին եւ ներկայ սգակիրներուն, մեր խորագագ ցաւակցութիւնները կը յայտնենք Հանգուցեալին մօրը՝ Կիրակնօրեայ Դպրոցներու վաստակաւոր գործիչ տիկին Նազելի Ազեգեանին, կնոջը՝ տիկին Անի Ազեգեանին, գաւակներուն՝ Նազիկին եւ Ալեքսանին, քոյրերուն, եղբօրը, որոնք բոլորն ալ Կիրակնօրեայ Դպրոցի ջահակիրներն են եւ բոլոր հարազատներուն:

Ամենաբարին Աստուած թող արդարներու շարքին դասէ Հանգուցեալը, եւ երկնքի արքայութեան արժանացնէ, իսկ ձեր բոլորը Ս. Հոգիով մխիթարէ:

Յիշատակը անթառամ՝

Կիրակնօրեայ Դպրոցներուն եւ Հայ Եկեղեցւոյ այս հաւատաւոր եւ յանձնառու զինուորին:

Չարեհ Քիյ, Շարքեան



Ռաֆֆի Սիլահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Սուրիոյ տարածքին մարզական ակումբները յառաջիկայ օրերուն կը պատրաստուին կատարել իրենց անդամական ընդհանուր ժողովները, ընտրելու նոր վարչակազմեր, որմէ ետք տեղի պիտի ունենան բոլոր մարզախաղերու ֆետերասիոններու, ինչպէս նաեւ մարզական կեդրոնական կոմիտէի ընտրութիւնները:

-ՅՄԸՄ-ի պասքէթի տողոց պատանեկան խումբը գրաւեց Յալէայի պասքէթի մրցաշարքի երկրորդ դիրքը, ավարտական մրցումին՝ պարտութեան մատուցելով Իթթիհատէն 81-48 արդիւնքով: Առաջին փուլին ՅՄԸՄ-ի կազմը պարտութեան մատուցեց Ճալաա-ը 54 - 49, ՅԵԸ-ը 76 - 69, Սքաքին 68 - 44 արդիւնքներով: Կիսաավարտականին դարձեալ պարտութեան մատուցեց Ճալաա-ը՝ 72 - 66 արդիւնքով:



ՀԱՅԿԱԿԱՆ

ՅԱԿՈՒ ՄԿՐՏԻՉԵԱՆ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ

Ծանրամարտիկ Յակոբ Մկրտիչեան Յայաստանի համար նուաճեց առաջին ոսկի մետալը՝ Թայլանտի Պատայա քաղաքին մէջ ծանրամարտի աշխարհի ախոյեանութեան մրցումներու ընթացքին: Մինչեւ 89 քկ. ծանրութիւն կրող մարզիկը պոկումի վարժութեան մէջ բարձրացուց 167 քկ., իսկ հրումի վարժութեան՝ 208 քկ.: Երկամարտի



375 քկ. արդիւնքով Յակոբը գրաւեց առաջին տեղը եւ հռչակուեցաւ աշխարհի ախոյեան: Նոյն ծանրութեան կարգին հանդէս եկող Դաւիթ Յովհաննեսեան երկամարտի 355 քկ. արդիւնքով գրաւեց 12-րդ տեղը:

ԾԱՆՐՈՐԴ ՍԻՄՈՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՆՈՅԵԱՆ

Թայլանտի մէջ կայացած համաշխարհային ծանրամարտի ախոյեանական մրցումներու ավարտին, Յայաստանի ծանրորդ Սիմոն Մարտիրոսեան դարձաւ աշխարհի ախոյեան: 109 քկ. ծանրութիւն կրած աշխարհի գործող ախոյեանը երկամարտի մրցումներուն բարձրացուց 429 քկ., 199+230 արդիւնքով: Պոկումի եւ հրումի վարժութիւններուն, հայ ծանրորդը նոյնպէս նուաճեց ոսկի փոքր մետալներ, եւ յաջողեցաւ արձանագրել միջազգային նոր մրցանիշ: Աւելցնենք, որ Սիմոնէն առաջ համաշխարհային մրցանիշը արձանագրողներն էին չինացի Ժան Ժենը եւ պելառուս Անտրէյ Արամաուն, որոնք յաջորդաբար բարձրացուցած էին 197 եւ 198 քկ. ծանրածոցերը:



ԳՈՒ ՄԻՆԱՍԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՆՈՅԵԱՆ ՌՈՒՔԷՆ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ՝ ՊՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԱԿԻՐ

Աշխարհի ծանրամարտի ախոյեանութեան մէջ Յայաստանը ներկայացնող մարզիկները շարունակելով իրենց յաջող արդիւնքները ծեռք բերին բազմաթիւ մետալներ: «+109» քկ. ծանրութիւն կրող մարզիկ Գոռ Մինասեան՝ երկամարտի 460 քկ., 212+248 արդիւնքով գրաւեց մրցանակային 2-րդ տեղը եւ դարձաւ արծաթէ մետալակիր: Ան պոկում եւ հրում վարժութիւններուն դարձեալ նուաճեց արծաթէ մետալ: Այս



կարգի ծանրութեան դարձեալ Յայաստանը ներկայացնող Ռուբէն Ալեքսանեան երկամարտին մէջ արձանագրեց 437 քկ., 192+245 արդիւնք եւ գրաւեց մրցանակային 3-րդ տեղը: Ան պոկում մետալ նուաճեց նաեւ հրումի վարժութեան մէջ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Մանչեսթըր Սիթին Պատրաստ Է Փոխարինելու Կուարտիոյան

Անգլիական MIRROR օրաթերթը յայտարարեց, թէ Մանչեսթըր Սիթի ակումբի ղեկավարները կը պատրաստուին խումբի մարզիչ Կուարտիոյի հրաժարակալին: Ըստ աղբիւրին, ներկայիս մարզիչը փոխարինելու կը պատրաստուի Ջովանի վան Փրոնկ-հորսթին: Հոլանտացի մասնագետին արդէն սկսած են ծանօթացնել մանչեսթըրեան ակումբի աշխատանքին: Մանչեսթըր Սիթին հետաքրքրուած է նաեւ Պատրիկ Վիեյրայի, Կուարտիոյի օգնական Միլեյ Արտետայի եւ խումբի նախկին ակազ Վենսըն Կոմպանիի ծառայութիւններով: Յիշենք, որ Կուարտիոյի պայմանագիրը Մանչեսթըր Սիթիի հետ նախատեսուած է մինչեւ 2021-ի ամառը:



«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

- Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեյն-Պողիկեան
- Սրբագրիչներ՝ Չեփիւմ Պապիկեան-Աւագեան
- Յուշիկ Ղազարեան
- Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
- Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան
- Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեյն
- Հաշուապահ՝ Սեւակ Կիլվանեսեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատան ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:



Ս. ԳԵՌՈՎ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ ՍՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱՏՈՆԱԿ

Ս. Գերով Զորավարին տօնին առիթով Ուրբաթ, 27 Սեպտեմբեր 2019-ին, երեկոյեան ժամը 5:00-ին, հանդիսապետութեամբ Բերիոյ Դանոյ Թեմի Առաջնորդ Գերջ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի եւ մասնակցութեամբ քահանայ հայրերուն

նական խօսքերով փառք վերառաքեց Աստուծոյ, որուն հովանիին ներքեւ առիթ ըծայուեցաւ միասիրտ աղօթելու եւ հաւատքի ախոյեան հանդիսացող Ս. Գերով գօրավարի խօսուն օրինակով ներշնչուելու: Սրբազան հայրը անդրադարձաւ պա-



Ս. Գերով եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակի արարողութիւն: Յուսարող

տերագմի աւերներուն, որոնց ծանր հետեւանքները անժխտելի իրողութիւններ են: Զակառակ տիրահռչակ



երեւոյթ էր բազմահարիւր հաւատացեալներուն խանդավառող ներկայութիւնը: Խուռներամ բազմութիւնը եկած էր Ս. Գերով գօրավարին օրինաբեր յիշատակը պատուելու եւ անոր բարեխօսութեան դիմելու:

դէպքերուն կարելի եղաւ վերստին կանգնիլ եւ վերաշինութեան գործին լծուիլ: Փուլ մը, որ Աստուծոյ օգնութեամբ եւ մեր հաւաքական ճիգերով կ'ունենայ բարեյաջող ընթացք: Սրբազանը խրախուսեց հոծ բազմութիւնը, որ հաւատքի մղումով ապացուցեց թէ Ս. Գերով գօրավարը համախմբող ու ժականութիւն ունի, մասնաւորաբար հալէպահայեր խոր կապուածութեամբ կը շարունակեն յաճախել սուրբին անունով օծուած այս եկեղեցին: Սրբազան հայրը գնահատեց ներկայ եկեղեցա-



Յալէպի Նոր Գիւղի շրջանը գըտնուող հրկիզուած Ս. Գերով եկեղեցին կրեց պատերազմի վերքերն ու հետքերը: Ան վնասներու ենթարկուեցաւ, բայց Աստուծոյ հայրական խնամքին շնորհիւ ստոյգ քանդումէ փրկուեցաւ: Ուստի, Գողգոթացեալ եկեղեցին վկան է հայու գոյապայքարին: Ուխտի օրուան բնոյթ ունեցաւ հոգեպարար եւ խորհրդաւոր հանդիպումը: Երկիւղած զգացումով, բարեպաշտական ապրումով ու յուզումնախան հոգեվիճակով ուխտաւորներ հետեւեցան մատուցուած աղօթքներուն եւ երգուած շարականներուն: Առաջնորդ Սրբազան հայրը փոխանցեց իր քարոզը: Ան գոհաբա-

սեր ժողովուրդը եւ թելադրեց կամքով զինուիլ, յոյսով բարիին կառչիլ, լաւատեսութեամբ գալիքին նայիլ, որպէսզի հայր խիզախ կեցուածքով արժեւորէ իր քրիստոնէայ կոչումը: Աւարտին, միասնաբար «Յայր Մեր»ը երգուեցաւ, ապա տեղի ունեցաւ մոմավառութիւն: Վիրաւոր Ս. Գերով եկեղեցին աստուածային օրինութեան պատուաստով միախառնեց վիրաւոր հալէպահայութիւնը, որ նախատօնակին ընդմէջէն վճռեց խաչի ճանապարհէն ընթանալ եւ Քրիստոսի յարթական երթին մասնակցի դառնալ: «Ուրախ լըր սուրբ եկեղեցի»:
Խորեն Քիւն, Պերթիզեան

ՀԱՆՏՈՒ ՄԵՉ... Սկիզբ՝ 19 1

թիւններու, կրթական, բարեսիրական հաստատութիւններու ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:



Երեկոյին ներկայ էին նաեւ Դիւպատոսութեան անձնակազմն ու Դայաստանի Զանրապետութեան մարդասիրական առաքելութեան խումբի Դիւպատոսութեան ներկայացուցիչը:

Սրահէն ներս հիւրերը ընդունուեցան դասական երաժշտութեամբ, կատարողութեամբ ԶԲԸՄ-ՅԵԸ-ի Կոմիտասի անուան սենեկային նուագախումբի անդամներէն կազմուած լարային քառեակին:

Ընդունելութեան բացումը կատարուեցաւ Սուրիոյ եւ Դայաստանի Զանրապետութեան օրհներգներով:

թիւնը կատարեց եւ Դայաստանի ներկայ տարածքին վրայ կրկին հռչակեց Դայաստանի անկախ պետականութիւնը, արտայայտելով իր ազատ ու անկախ ապրելու կամքը»:

ԶԴ Կալէպի Գլխաւոր Դիւպատոս Արմէն Սարգիսեան իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց Սուրիոյ հիւրընկալ ժողովուրդին, որ 1915-ին ընդունեց Օսմանեան Կայսրութեան իրագործած ցեղասպանութենէն մազապործ բազմահար հայերը իր հողին վրայ, հետեւաբար Դայաստանի Զանրապետութեան մարդասիրական առաքելութեամբ Կալէպ գըտնուող սակրաւորներու խումբին կատարած գործունէութիւնը երկու ժողովուրդներու փոխադարձ սիրոյ արտայայտութիւնը անուանեց: Ապա ան ողջունեց Սուրիոյ Զանրապետութեան նախագահը, որ առիթ ընծա-



յեց Սուրիան մեր երկրորդ հայրենիքը դարձնելու: Աւարտին տեղի ունեցաւ ԶԴ



Այս առիթով խօսք առաւ ԶԴ Կալէպի Գլխաւոր Դիւպատոս Արմէն Սարգիսեան, որ բարի գալուստ մաղթելով ներկաներուն ըսաւ.

վերանկախութեան 28-ամեակին նուիրուած կարկանդակի հատումը: Ներկաները ջերմ մթնոլորտի մէջ շնորհաւորանքներ փոխանակեցին



«28 տարի առաջ վերականգնեցաւ ժողովուրդի մը գոյապայքարին աննկարագրելի, խորախորհուրդ իրականութիւնը: Սոյն պատմութիւնը գրողը մենք ենք՝ հայ ժողովուրդը, որ իր պատմական ընտրու-

եւ պայծառ ապագայ մաղթեցին Դայաստանի Զանրապետութեան: Ընդունելութեան լրատուութիւնը կատարուեցաւ տեղական եւ հայկական լրատուամիջոցներու կողմէ: